ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«05» նոյեմբեր 2020թ. No 3898 - Լ

«ՅԱՆԻԼԻՍ (ԹԹՎԱԾԻՆ)» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Յանիլիս (թթվածին) ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված

Առողջապահության նախարարի
2020թ. նոյեմբերի 05- ի
3898 - Լ հրամանի

ՀՐԱՀԱՆԳ

«ՅԱՆԻԼԻՍ (ԹԹՎԱԾԻՆ)»

ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Յանիլիս (թթվածին)» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց)՝ իրենից ներկայացնում է ջրում լուծվող, սպիտակից մինչև բաց դեղին գույնի փոշի: Այն պարունակում է նատրիումի պերկարբոնատ 50 %, տետրաացետիլենդիամին (ՏԱԵԴ) 5,0 %, կոռոզիայի արգելակիչ, կայունացնող և լվացող (մակերեսային ակտիվ նյութեր) հավելումներ, ինչպես նաև ֆունկցիոնալ և օժանդակ բաղադրիչներ:

2. Ազդող նյութն ակտիվ թթվածինն է և հարքացախաթթուն, որն առաջանում է միջոցը ջրի մեջ լուծման ժամանակ: Միջոցի 1% ջրային լուծույթի pH –ը 10±1,0 է:

3. Միջոցը թողարկվում է կափարիչով փակվող 0.5-10 կգ տարողությամբ պոլիմերային տարաներով, հավաքածուի մեջ ներառված են պլաստիկ չափիչ գդալներ, ինչպես նաև հերմետիկ փաթեթավորմամբ՝ 0,01-0,1 կգ քանակությամբ մեկ սաշե-ծրարի մեջ, փաթեթավորված 1-ից 10 կգ քաշով պլաստիկ կամ ստվարաթղթե տարաների մեջ և 0,1-ից 0,5 կգ առանձին փաթեթներով:

4. Միջոցի պիտանելիության ժամկետը 3 տարի է՝ արտադրողի փակ փաթեթավորմամբ 0^0C-ից մինչև +30^0C ջերմաստիճանում, այդ թվում՝ տարան բացելուց հետո (չոր չափիչ գդալներ օգտագործելու պայմանով՝ խոնավության ներթափանցումը կանխելու համար: Թույլատրվում է միջոցի տեղափոխումը բացասական ջերմաստիճանի պայմաններում: Աշխատանքային լուծույթի պիտանելիության ժամկետը 24 ժամ է:

5. Միջոցի աշխատանքային լուծույթներն օժտված են մանրէասպան (ազդում են գրամբացասական և գրամդրական մանրէների, այդ թվում՝ ներհիվանդանոցային վարակների հարուցիչների վրա), տուբերկուլոցիդ ազդեցությամբ (թեստավորված Mycobacterium terrae-ի վրա), վիրուսասպան (մարդու բոլոր հայտնի ախտածին վիրուսների, այդ թվում ընդերային և արտաընդերային հեպատիտների (ներառյալ հեպատիտներ Ա-ն, Բ-ն և Ց-ն), ՄԻԱՎ-ի, պոլիոմիելիտի նկատմամբ), սնկասպան, սպորասպան հատկություններով: Բացի այդ, միջոցն օժտված է հակաբորբոսային ակտիվությամբ, ազդում է հատուկ վտանգավոր վարակների (խոլերա, տուլարեմիա, բրուցելոզ, սիբիրյան խոց), ինչպես նաև անաէրոբ վարակների հարուցիչների վրա:

6. Միջոցի աշխատանքային լուծույթն ունի լվացող հատկություն, բուրումնավետ է, օրգանական աղտոտվածությունը չի ֆիքսում մշակվող առարկաների մակերեսներին, չի գունաթափում գործվածքը, կարող է օգտագործվել տարբեր նյութերից պատրաստված առարկաների մշակման համար, այդ թվում ոչ ջերմակայուն նյութերից և օրգանական ապակուց (պլեքսիգլասից): Աշխատանքային լուծույթը ոչ դյուրավառ է, անվտանգ հրդեհների և պայթյունների առումով:

7. Միջոցի աշխատանքային լուծույթները չի թույլատրվում օգտագործել ալյումինից, պղնձից, արույրից պատրաստված առարկաների մշակման համար, ինչպես նաև՝ կոռոզիայի նկատմամբ անկայուն նյութերից պատրաստված առարկաների մշակման համար, որոնք չունեն պաշտպանիչ գալվանական ծածկույթներ:

8. Միջոցն ըստ սուր թունավորության չափանիշների, ԳՕՍՏ 12.1.007-76-ին համապատասխան, ստամոքսի մեջ ներմուծելիս պատկանում է քիչ վտանգավոր նյութերի 3-րդ դասին, մաշկի վրա լցվելիս՝ քիչ վտանգավոր նյութերի 4-րդ դասին, գործնականում թունավոր չէ արտաընդերային ներմուծման ժամանակ՝ ըստ Կ. Կ. Սիդորովի դասակարգման, ներշնչական (ինհալյացիոն) ազդեցության ժամանակ հագեցած գոլորշիները քիչ վտանգավոր են (ըստ անկայունության աստիճանի վտանգավորության 4-րդ դաս), օժտված չէ գերզգայունացնող հատկություններով, անմիջական շփման ժամանակ առաջացնում է մաշկի և աչքերի լորձաթաղանթի գրգռում:

9. Աշխատանքային գոտու օդում նատրիումի պերկարբոնատի աէրոզոլի սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ) 2 մգ/մ^3 է, հարքացախաթթվի ՍԹԽ-ն՝ 5 մգ/մ^3:

10. Միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն) (հիվանդանոց, պոլիկլինիկա, վերականգնողական կենտրոն, ցերեկային ստացիոնար, բուժսանմաս և բուժկետ, բուժակային և բուժակ-մանկաբարձական կետ, հեմոդիալիզի բաժանմունք, դիսպանսեր, հոսպիտալ, ատամնաբուժական կաբինետ, ծննդաբերական ստացիոնար, օրգանների փոխպատվաստման կենտրոն, արյան փոխներարկման և շտապօգնության կայան և այլն), կլինիկական, մանրէաբանական, ախտաբանանատոմիական, իմունաբանական, ախտորոշիչ և ախտածնության 3-4 խմբերի մանրէների հետ աշխատող այլ լաբորատորիաներում, վարակիչ հիվանդությունների օջախներում, սպասարկման ոլորտի օբյեկտներում (հյուրանոց, հանրակացարան, բաղնիք, շոգեբաղնիք (սաունա), լվացքատուն, գեղեցկության սրահ, սոլյարի, պիրսինգի և դաջվածքի սրահներ, ոտնա- և մատնահարդարման սրահներ, կոսմետոլոգիական կաբինետներ, ՍՊԱ սրահներ և այլն), առողջարաններում, հանգստյան տներում, միջամտությունների կաբինետներում, ֆիզիոթերապևտիկ կաբինետներում, ջրաբուժարաններում, բժշկական կոսմետոլոգիայի կաբինետներում, հանգստյան և սպորտի կազմակերպություններում (մարզադաշտ, լողավազան, ակվապարկ, սպորտային դահլիճ, ֆիթնես կենտրոն, խաղային և զվարճանքի կենտրոն և այլն), հասարակական շենքերում և վարչական կազմակերպություններում (ցուցահանդես, կինոթատրոն, թատրոն, թանգարան, գրադարան, առևտրի կենտրոն և այլն), հասարակական զուգարաններում, այդ թվում բիոզուգարաններում, սանթողարաններում, հանրային սննդի կազմակերպություններում (ռեստորան, սրճարան, ճաշարան, բար, բուֆետ, սննդի բլոկ, սննդի նախապատրաստման մաս և այլն), սննդարդյունաբերության և սննդի առևտրի կազմակերպություններում, դեղատներում (ներառյալ դեղատնային կրպակների և դեղերի պատրաստման բաժինների, դեղերի պահեստների), քիմիկա-դեղագործական և օծանելիքակոսմետիկական արտադրության կազմակերպություններում, այլ արտադրական կազմակերպություններում և պահեստներում, այդ թվում ցորենի, սննդամթերքի, հիգիենայի պարագաների պահեստներում, թղթային պահոցներում, սպառողական և արդյունաբերական շուկաներում, մանկական և հանրակրթական կազմակերպություններում (մանկապարտեզ, դպրոց, միջին մասնագիտացված ուսումնական հաստատություն, ԲՈՒՀ, հատուկ մասնագիտացված ուսումնական

հաստատություն, երեխաների հատուկ հաստատություններ (մանկատուն, տուն-ինտերնատ, մանկական առողջարան և այլն)), սոցիալական ապահովման հաստատություններում (հոսպիս, պալիատիվ խնամքի կենտրոն, տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատ և այլն), քրեակատարողական հիմնարկներում, դատա-բժշկական փորձաքննության կազմակերպություններում և օբյեկտներում, դիահերձարաններում, հուղարկավորության արարողությունների կազմակերպման հաստատություններում (դիակիզարան, կոլումբարիում), ջրամատակարարման օբյեկտներում և էներգոցանցերում, ՊՆ, ԱԻՆ, ոստիկանության և այլ գերատեսչություններին պատկանող օբյեկտներում, սանիտարական տրանսպորտի, սննդամթերքի տեղափոխման տրանսպորտի, քաղաքային վերգետնյա և էլեկտրատրա-ուղևորատրանսպորտի, բեռնափոխադրող տրանսպորտի, ավտոտրանսպորտային արտադրություններում, մաքրող կազմակերպությունների կողմից մաքրման վայրերում, մարդկանց զանգվածային կուտակումների վայրերում, ինչպես նաև այլ համաճարակային նշանակություն ունեցող օբյեկտներում, որտեղ պահանջվում է ախտահանման աշխատանքների իրականացում՝ գործող նորմատիվների համապատասխան, ինչպես նաև ազգաբնակչության կողմից՝ կենցաղում օգտագործելու համար:

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

11. Միջոցի աշխատանքային լուծույթները պատրաստում են էմալապատ (առանց էմալի վնասման), ապակյա կամ պլաստմասե տարաներում:

12. Չի թույլատրվում աշխատանքային լուծույթների պատրաստման համար օգտագործել պղնձից, արույրից, ալյումինից, ինչպես նաև կոռոզիայի նկատմամբ անկայուն (որոնք չունեն պաշտպանիչ գալվանական ծածկույթներ) նյութերից պատրաստված տարաներ:

13. Աշխատանքային լուծույթների պատրաստումը ներկայացված է սույն հրահանգի աղյուսակներ 1-3–ում:

14. Աշխատանքային լուծույթները պատրաստում են, լուծելով միջոցի փոշին 22-30 ^{0}C խմելու ջրում, լավ խառնելով լուծույթը: Միջոցի լուծման ընթացքում չի պահանջվում պահպանել նշված ջերմաստիճանը, լուծույթը չեն տաքացնում: Լուծման ընթացքն

արագացնելու համար կարելի է օգտագործել 35-45^{0}C ջուր և լավ խառնել: Այս մեթոդով լուծույթը պատրաստում են կիրառելուց անմիջապես առաջ և կիրառում են ընթացիկ և հիմնական մաքրման ժամանակ մակերեսներն ախտահանելու համար:

15. Աշխատանքային լուծույթը համարվում է օգտագործման համար պիտանի փոշին լիովին լուծվելուց հետո: Թույլատրվում է աննշան նստվածքի առկայությունը, որն ապահովում է հարքացախաթթվի շարունակական առաջացումը:

Աղյուսակ 1.

Միջոցի աշխատանքային լուծույթի

պատրաստման սխեմա

Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	Միջոցի և ջրի քանակը, որը պահանջվում է աշխատանքային լուծույթի պատրաստման համար					
	1 լիտր		5 լիտր		10 լիտր	
	միջոց	ջուր	միջոց	ջուր	միջոց	ջուր
0,10	1,0	999,0	5,0	4995,0	10	9990
0,20	2,0	998,0	10,0	4990,0	20	9980
0,40	4,0	996,0	20,0	4980,0	40	9960
0,50	5	995	25	4975	50	9950
0,60	6	994	30	4970	60	9940
1,0	10	990	50	4950	100	9900
1,5	15	985	75	4925	150	9850
2,0	20	980	100	4900	200	9800
3,0	30	970	150	4850	300	9700
4,0	40	960	200	4800	400	9600
5,0	50	950	250	4750	500	9500
10,0	100	900	500	4500	1000	9000

Աղյուսակ 2.

Աշխատանքային լուծույթի պատրաստումը

չափիչ գդալի օգտագործմամբ

Աշխատանքային լուծույթի խտությունն	Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող չափիչ գդալի, միջոցի (լ) քանակը

ըստ միջոցի, %	1 լիտր	2 լիտր	3 լիտր	4 լիտր	5 լիտր	6 լիտր	7 լիտր	8 լիտր	9 լիտր	10 լիտր
0,10	-	-	-	-	-	-	-	-	-	1
0,20	-	-	-	-	1	-	-	-	-	2
0,40	-	-	-	-	2	-	-	-	-	4
0,50	-	1	-	2	-	3	-	4	-	5
0,60	-	-	-	-	3	-	-	-	-	6
1,0	1	2	3	4	5	6	7	8	9	10
1,5	-	3	-	6	-	9	-	12	-	15
2,0	2	4	6	8	10	12	14	16	18	20
3,0	3	6	9	12	15	18	21	24	27	30
4,0	4	8	12	16	20	24	28	32	36	40
5,0	5	10	15	20	25	30	35	40	45	50
10,0	10	20	30	40	50	60	70	80	90	100

1 չափիչ գդալը պարունակում է 10 գ միջոց:

Աղյուսակ 3.

Աշխատանքային լուծույթի պատրաստումը

սաշե-ծրարի օգտագործմամբ

Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող չափիչ գդալի, միջոցի (լ) քանակը									
	1 լիտր	2 լիտր	3 լիտր	4 լիտր	5 լիտր	6 լիտր	7 լիտր	8 լիտր	9 լիտր	10 լիտր
0,10	-	-	-	-	-	-	-	-	-	1
0,20	-	-	-	-	1	-	-	-	-	2
0,40	-	-	-	-	2	-	-	-	-	4
0,50	-	1	-	2	-	3	-	4	-	5
0,60	-	-	-	-	3	-	-	-	-	6
1,0	1	2	3	4	5	6	7	8	9	10
1,5	-	3	-	6	-	9	-	12	-	15
2,0	2	4	6	8	10	12	14	16	18	20
3,0	3	6	9	12	15	18	21	24	27	30

4,0	4	8	12	16	20	24	28	32	36	40
5,0	5	10	15	20	25	30	35	40	45	50
10,0	10	20	30	40	50	60	70	80	90	100

1 չափիչ գդալը պարունակում է 10 գ միջոց:

16. Աշխատանքային լուծույթի պիտանելիության ժամկետը սենյակային ջերմաստիճանի պայմաններում կափարիչով փակվող տարաներում 24 ժամ է:

17. Արագ լուծման մեթոդով պատրաստված աշխատանքային լուծույթի պիտանելիության ժամկետը սենյակային ջերմաստիճանի պայմաններում կափարիչով փակվող տարաներում 3 ժամ է:

18. Ցողելու և ոռոգման եղանակով ախտահանման համար աշխատանքային լուծույթներն օգտագործվում են մեկ անգամ: Ընկղմելու եղանակով ախտահանման համար աշխատանքային լուծույթներն օգտագործվում են բազմակի՝ աշխատանքային լուծույթի պիտանելիության ժամկետում, եթե լուծույթի արտաքին տեսքը չի փոփոխվել: Արտաքին տեսքի (գույնի փոփոխություն, նստվածքի առաջացում և այլն) փոփոխության առաջին նշանների դեպքում լուծույթն անհրաժեշտ է փոխել:

19. Աշխատանքային լուծույթի խտությունը հսկելու նպատակով խորհուրդ է տրվում օգտագործել ինդիկատոր («Յանիլիս (թթվածին)» թեստ-զոլեր):

Աղյուսակ 4.

Միջոցի աշխատանքային լուծույթի
պատրաստման սխեմա սպիտակեղենի ախտահանման համար

Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	Միջոցի խտանյութի (գ) և ջրի (մլ) քանակը, որը պահանջվում է աշխատանքային լուծույթի պատրաստման համար					
	1 կգ		5 կգ		10 կգ	
	միջոց	ջուր	միջոց	ջուր	միջոց	ջուր
0,20	10	4990	50	24950	100	49900
0,40	20	4980	100	24900	200	49800
0,60	30	4970	150	24850	300	49700

Նշում – Խտանյութի քանակը հաշվարկվել է միջոցի աշխատանքային լուծույթի 5լ-ը 1 կգ սպիտակեղենին հաշվարկով: Աղյուսակը ներկայացված է 10 մգ-էկվ/լ կոշտությամբ ջրի համար: 10 մգ-էկվ/լ-ից կոշտ ջուր կիրառելիս անհրաժեշտ է միջոցի քանակը ավելացնել 10%-ով:

3. ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Կիրառման օբյեկտներ: Միջոցի աշխատանքային լուծույթը նախատեսված է ախտահանման և լվացման (այդ թվում դեզադորացման) համար՝ կանխարգելիչ, ընթացիկ և եզրափակիչ ախտահանման, ինչպես նաև հիմնական մաքրման նպատակով.

1) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, ինչպես նաև այլ կազմակերպությունների սենքերի արտաքին մակերեսներ (հատակ, պատեր, առաստաղ) և կահավորանք (այդ թվում կոշտ և փափուկ կահույք),

2) բժշկական և այլ սարքավորումներ, սարքեր, բարդ սարքերի և սարքավորումների՝ թոքերի արհեստական շնչառական սարքերի տարրեր (շնչադիմակ, օդափոխիչ, ասպիրատոր), կուվեզներ և նրան հարմարացրած սարքեր, անզգայացման սարքավորումների համալիր մասեր՝ նաև ջերմանկայուն և այլն,

3) ստոմատոլոգիայում կիրառվող բժշկական արտադրատեսակներ և սարքավորումներ (արտածծող համակարգ, թքաման, ստոմատոլոգիական արտատպվածք, մետաղական, կերամիկական, պլաստմասսե ատամնապրոթեզներ, ստոմատոլոգիական գործիքներ (մշակվում են ընկղմման եղանակով),

4) հիվանդի խնամքի պարագաներ, ինչպես նաև բժշկական կազմակերպություններում օգտագործվող այլ պարագաներ (անձնական հիգիենայի միջոցներ, ռետինե և պոլիպրոպիլենային գորգեր, մոմլաթե տակդիրներ),

5) օդափոխության և օդորակման համակարգեր,

6) սանիտարա-տեխնիկական սարքավորումներ (այդ թվում հախճապակյա, չուգունե և ակրիլից պատրաստված վաննաներ, ջրաբուժարանային, բուժիչ, ցեխային, հանքային, ջրամերսման և այլ լոգախցիկներ, ՍՊԱ պատիճներ և այլն),

7) մաքրման պարագաներ,

8) սպիտակեղեն (այդ թվում անհատական, անկողնային), անձնակազմի պաշտպանիչ հագուստ, տեքստիլ նյութերից պատրաստված այլ առարկաներ,

9) խաղալիքներ, կոշիկ, ռետինից, պլաստիկից և այլ պոլիմերային նյութերից բաղկացած սպորտային պարագաներ,

10) ճաշարանային, լաբորատոր, դեղատնային սպասք (այդ թվում միանվագ օգտագործման),

11) բժշկական թափոններ, այդ թվում միանվագ օգտագործման փափուկ վիրակապական նյութ, միանվագ օգտագործման անկողնային և անհատական

սպիտակեղեն (Б, В դասերի)՝ նախքան դրանց օգտահանելը, ինչպես նաև թափոնների հավաքման բազմակի օգտագործման տարաներ,

12) կենսաբանական նյութի, այդ թվում առանձին հավաքագրված (ներառյալ արյան, արյան շիճուկի և պլազմայի, մեզի, կղանքի, փոխման զանգվածի, ողնուղեղային հեղուկի, վիրահատական նյութի, դրենաժային արտադրության, ախտաբանաանատոմիական թափոնների (հյուսվածքներ, օրգաններ և այլն), էրիթրոցիտար զանգված, հարպտղային հեղուկ, էնդոսկոպների լվացման ջուր) և դրանց հավաքման տարաները),

13) արյան մակարդուկներ, դոնորական արյան և ժամկետանց արյան պրեպարատներ, օգտագործված բժշկական տզրուկներ,

14) բժշկական իմունակենսաբանական պրեպարատների, այդ թվում ԲՑԺ և այլ պատվաստանյութերի և շիճուկների՝ փաթեթի վնասման, ժամկետանց լինելու պատճառով և այլ խախտումների դեպքում օգտահանելուց առաջ,

15) ցիտոստատիկների և գենոտոքսիկ պրեպարատների (Գ դասի թափոններ) ապակտիվացում, ինչպես նաև այն աշխատավայրի մակերեսների ապակտիվացում, որտեղ իրականացվել է աշխատանք նշված դեղամիջոցների հետ,

16) տրանսպորտի և սարքավորումների մակերեսների (սանիտարական, քաղպաշտպանության ծառայության, սննդամթերքի տեղափոխման, ուղևորատար, բեռնատար և այլն), երկաթուղային և ջրային տրանսպորտ, օդային տրանսպորտի ցամաքային օբյեկտներ, մետրոպոլիտեն,

17) բնակելի, հասարակական և վարչական շենքերի աղբահեռացման համակարգ, ներառյալ աղբահեռացման սարքավորումներ, աղբատարներ, աղբարկղեր և այլն,

18) բնակչության սպասարկման ոլորտի օբյեկտներում (գեղեցկության սրահ, վարսավիրանոց) կիրառվող գործիքներ, սարքավորումներ, կահավորանք և օժանդակ պարագաներ:

21. Ձեռքային և մեքենայացված (լվացող-ախտահանող մեքենաներում) եղանակներով ճկուն և կոշտ էնդոսկոպների նախնական և հիմնական մաքրման, նախամանրէազերծման մշակման համար՝ նախքան բարձր մակարդակի ախտահանումը:

22. Բժշկական նշանակության իրերի, ներառյալ վիրաբուժական և ստոմատոլոգիական գործիքների (այդ թվում ջերմազգայուն նյութերից պատրաստված

պտտվող իրերի), ձեռքային և մեքենայացված (ցանկացած տիպի ուլտրաձայնային սարքավորում) եղանակներով ախտահանման, նախամանրէազերծման մշակման համար:

23. Միջոցի աշխատանքային լուծույթը նախատեսված է նաև ազգաբնակչության կողմից կենցաղում օգտագործելու՝ համապատասխան պիտակի:

24. Միջոցի խտանյութը (առանց նոսրացնելու) կիրառվում է միայն հեղուկ թափոնների ախտահանման համար (մաքրման համար ախտահանիչ լուծույթներով մշակած կենսաբանական հեղուկներ):

4. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

25. Սենքերում մակերեսների (հատակ, պատ, դուռ, պատուհան, կահույք, սարքավորում՝ այդ թվում գործիք և ապարատ) ախտահանումն իրականացվում է շփման կամ ոռոգման եղանակով: Միջոցի լուծույթի ծախսի սահմանված չափաքանակը մակերեսների մշակման ժամանակ կազմում է. շփման եղանակով՝ 100 մլ/մ^2 մակերեսի, ոռոգման եղանակով՝ 300 մլ/մ^2 մակերեսի (հիդրոպուլտի կամ ավտոմաքսի օգտագործմամբ), ոռոգման եղանակով՝ 150 մլ/մ^2 մակերեսի («Կվազար» տեսակի ցողացրիչ) համար:

26. Սենքերում մակերեսների ախտահանման ռեժիմները տարբեր վարակների ժամանակ ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 5-ում, իսկ հիմնական մաքրման ռեժիմները՝ աղյուսակ 6-ում: Ստացիոնարում (բաժանմունքում) բժշկական միջամտություններով պայմանավորված վարակներ (ԲՄՊՎ) հայտնաբերելու դեպքում իրականացնում են ընթացիկ ախտահանում՝ ըստ սույն հրահանգի աղյուսակ 13-ում ներկայացված ռեժիմների, իսկ հատուկ վտանգավոր վարակների դեպքում՝ ըստ աղյուսակ 14-ում ներկայացված ռեժիմների:

27. Աղտոտված մակերեսներին կտրող-ծակող առարկաների (կոտրած ապակի, ասեղ և այլն) մաքրման ժամանակ օգտագործում են լրացուցիչ հարմարանքներ (ավել, գոգաթիակ, ունելի և աքցան)՝ մաշկի վնասումից խուսափելու համար: Կենսաբանական հեղուկներով փափուկ, ծակոտկեն, անհարթություն ունեցող մակերեսներն աղտոտվելիս՝ մշակում են միջոցի լուծույթով թրջված խոզանակով, իսկ փափուկ

կահույքը և գորգերը ենթարկվում են գոլորշային կամ քիմիական մեթոդներով մաքրման:

28. Մշակման մեթոդաբանություն՝ կենսաբանական արտադրություններով չաղտոտված կոշտ մակերեսները շփում են միջոցի աշխատանքային լուծույթով թրջված լաթով կամ ոռոգում ախտահանիչների ցողացրման համար նախատեսված հատուկ հարմարանքներով: Փափուկ մակերեսները մշակում են խոզանակով, պահում ազդեցության ժամանակ և օդափոխում սենքը:

29. Կենսաբանական հեղուկներով ցանկացած աստիճանի աղտոտվածությունն ունի համաճարակաբանական նշանակություն: Կենսաբանական հեղուկներով (այդ թվում չորացած) աղտոտված մակերեսները և օբյեկտները մշակում են հետևյալ մեթոդով:

30. Մակերեսի նախնական մաքրում: Մակերեսը պատում են ախտահանիչ միջոցով, կանխելով ցայտերի և ճողփյունների առաջացումը, քսում են ախտահանիչը արտաքին եզրերից դեպի աղտոտվածության կենտրոնը ուղղությամբ: Ուղղահայաց մակերեսները (առաստաղ, պատ, սանդուղք) աշխատանքային լուծույթով պատելու համար օգտագործում են ցողացրիչ կամ հատակամաքրիչ: Ազդեցության պահաժամից (ներկայացված է սույն հրահանգի աղյուսակ 5-ում) հետո ախտահանված կենսաբանական հեղուկը հեռացնում են միջոցի լուծույթով ներծծված գործվածքով (անձեռոցիկով) կամ մեկանգամյա թղթե (գործվածքե) սրբիչներով՝ դրանց հետագա օգտահանմամբ: Մակերեսը կրկնակի մշակում են միջոցի լուծույթով, ազդեցության պահաժամից հետո ախտահանիչի մնացորդները հեռացնելու համար իրականացնում են խոնավ մաքրում:

31. Օրգանական աղտոտվածությամբ (արյուն, մեզ, փսխման զանգված) մակերեսների ախտահանման արդյունավետության համար նախապես սորբենտի օգնությամբ հավաքում են թափված հեղուկը: Առավել արդյունավետ է երկփուլ մշակումը:

32. Փուլ 1. Թափվածքի տեղն ախտահանելու համար կիրառում են չեզոք սորբենտ և միջոցի լուծույթ կամ միջոցի խտանյութը միաժամանակյա կիրառում են սորբենտի և ախտահանիչի հետ: Նախ սահմանազատում են թափվածքի մակերեսը և իրականացնում հեղուկի կլանում: Կենսաբանական հեղուկները հավաքելու համար կիրառում են չեզոք (օրինակ՝ մեկանգամյա թղթե (գործվածքե) անձեռոցիկներով) կամ միջոցի խտանյութ սորբենտները այն քանակով, որ թափվածքն ամբողջովին ներծծվի:

Կենսաբանական հեղուկների վարակիչ թափվածքների մաքրումը չեզոք սորբենտներով համակցվում է ախտահանման հետ, իսկ միջոցի խտանյութ սորբենտի կիրառման դեպքում ախտահանիչ լուծույթի լրացուցիչ քանակ անհրաժեշտ չէ:

33. Թափվածքն ամբողջությամբ ներծծում են անհրաժեշտ քանակի սորբենտով: Չեզոք սորբենտ կիրառելիս՝ թափվածքն ամբողջովին կլանելուց հետո, ոռոգման եղանակով ներմուծում են միջոցի 1% աշխատանքային լուծույթ արտաքին եզրերից դեպի աղտոտվածության կենտրոնը՝ կանխելով ցայտերի և ճողփյունների առաջացումը: Ցողացրիչի կիրառման դեպքում միջոցը ցրում են մշակվող մակերեսին հնարավորինս մոտ՝ աէրոզոլների առաջացումը և հեղուկի շաղ տալը կանխելու նպատակով: Ազդեցության պահաժամը ներկայացված է սույն հրահանգի աղյուսակ 5-ում (չեզոք սորբենտի և 1% աշխատանքային լուծույթի դեպքում՝ 30 րոպե, իսկ խտանյութ կիրառելիս՝ 15 րոպե): Հեղուկը կլանելուց հետո սորբենտը հեռացնում են հատուկ օժանդակ միջոցների օգնությամբ (գոգաթիակ, ունելի, աքցան կամ կտրող- ծակող առարկաների հավաքման այլ լրացուցիչ հարմարանքներ): Թափոնների օգտահանման համար մշակված սորբենտը տեղավորում են կենսաբանական վտանգի մակնշումով հատուկ տարաների կամ փաթեթների մեջ, իսկ կտրող-ծակող առարկաները՝ հերմետիկ կոնտեյների մեջ:

34. Փուլ 2. Մակերեսի ախտահանում՝ սորբենտի հեռացումից անմիջապես հետո իրականացնում են մակերեսի կրկնակի, եզրափակիչ ախտահանում միջոցի աշխատանքային լուծույթով՝ սույն հրահանգի աղյուսակ 5-ի I սյունակում ներկայացված վարակին համապատասխան՝ շփման կամ ոռոգման եղանակով: Ազդեցության պահաժամից հետո ախտահանիչի մնացորդները հեռացնելու համար իրականացնում են խոնավ մաքրում:

35. Թափվածքի չեզոքացման ստանդարտ հավաքածուն ներառում է միջոցի աշխատանքային լուծույթ, անհատական պաշտպանության միջոցներ (ամուր ձեռնոց, պաշտպանիչ ակնոց, դիմակ, շնչադիմակ, խալաթ), կենսաբանական վտանգի մակնշումով թափոնների փաթեթ, կտրող-ծակող առարկաների օգտահանման համար նախատեսված հերմետիկ կոնտեյներ, մաքրման պարագաներ (գոգաթիակ, ունելի, աքցան կամ կտրող- ծակող առարկաների հավաքման այլ լրացուցիչ հարմարանքներ):

36. Կենսաբանական արտադրություններ կամ արյուն պարունակող մաքրման պարագաներն օգտահանվում կամ ավտոկլավ են դրվում՝ ըստ գործող կանոնների և

նորմատիվների: Առանձին հավաքված կենսաբանական նյութերը (այդ թվում կենսաբանական հեղուկների մեծ թափվածքների հավաքման ժամանակ կլանածը) ախտահանում են փակ կափարիչով տարաների մեջ՝ սույն հրահանգի աղյուսակ 14-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

Աղյուսակ 5

Բժշկական և այլ կազմակերպություններում մակերեսների ախտահանման ռեժիմները միջոցի լուծույթներով տարբեր էթիոլոգիայի վարակների համար

Վարակի էթիոլոգիան[1]	Ախտահանման օբյեկտ					
	I		II		III	
	Սենքերի մակերեսներ, կոշտ կահույք, սարքերի և ապարատների հանգույցներ և այլն		Սենքերի մակերեսներ՝ աղտոտված կենսաբանական հեղուկներով		Փափուկ մակերեսներ, այդ թվում գորգեր և հատակի այլ փափուկ ծածկ, փափուկ կահույք	
	Ախտահանման եղանակը, աշխատանքային լուծույթի խտությունը, պահաժամը, %					
	Շփում, ողողում		Կրկնակի ողողում առանց ժամային ինտերվալի կամ ողողում՝ հետագա շփումով		Շփում, խոզանակով մշակում	
	%	րոպե	%	րոպե	%	րոպե
Մանրէային (տուբերկուլոզից բացի)	0,1 0,2 0,5 1,0	60 30 10 5	0,2 0,5 1,0 -	60 30 15 -	0,2 0,5 1,0 -	45 30 15 -
			1,0* խտանյութ	30 15		
Վիրուսային	0,2 0,5 1,0	30 15 10	0,2 0,5 1,0	60 30 15	0,5 1,0 1,5	60 30 15
			1,0* խտանյութ	30 15		
Սնկային	0,2 0,5 1,0	30 15 10	0,2 0,5 1,0	60 30 15	0,5 1,0 1,5	60 30 15

(կանդիդոզ)						
			1,0* խտանյութ	30 15		
Սնկային (դերմատոֆիտիա)	0,5	60	1,0	60	1,0	60
	1,0	30	2,0	30	2,0	30
			1,0* խտանյութ *	30 15		
Սնկային (բորբոսասնկեր)	1,0	30	1,0	60	1,0	60
Տուբերկուլոզ2	0,5	60	1,0	60	1,0	60
	1,0	30	2,0	30	2,0	30
	1,5	15	-	-	-	-
	2,0	10	-	-	-	-
			1,0* խտանյութ	30 15		

Նշում՝ 1. Առարկաներն ու օբյեկտները ներկայացված են սույն հրահանգի 3. գլխում
2, Թեսթավորվել է Mycobacterium terrae-յի վրա:

Աղյուսակ 6

Բժշկական և այլ կազմակերպություններում միջոցի լուծույթներով մակերեսների ախտահանման ռեժիմները հիմնական մաքրման ժամանակ

Կազմակերպության ուղղվածություն	Լուծույթի խտությունը %, ըստ միջոցի	Պահաժամը, րոպե	Ախտահանման եղանակը
Սոմատիկ բաժանմունքներ (բացի միջամտության սենյակից)	0,1	60	Շփում, ողողում
	0,2	30	
	0,5	15	
Վիրաբուժական, ստոմատոլոգիական, մանկաբարձագինեկոլոգիական, միջամտությունների սենյակ և բաժանմունքներ, լաբորատորիաներ, վիրահատարան և վիրակապարան	0,2	60	Շփում, ողողում
	0,5	30	
	1,0	15	
Հակատուբերկուլոզային բժշկական կազմակերպություններ	0,5	30	Շփում, ողողում
	1,0	15	
	1,0	30	

Մաշկավեներական բաժանմունքներ և բժշկական կազմակերպություններ	1,5	15	
Ինֆեկցիոն բժշկական կազմակերպություններ	--[1]	--[1]	Շփում, ոռոգում
Մաքրում՝ ուղղված բորբոսի դեմ պայքարին	1,0	30	Շփում, ոռոգում
Մանկական կազմակերպություններ	0,1	60	Շփում, ոռոգում
	0,2	30	
	0,5	15	

Նշում՝ 1 – Հիմնական մաքրումն իրականացվում է վարակի ռեժիմին համապատասխան:

37. Սանիտարատեխնիկական սարքավորումների՝ խեցե, չուգունե և ակրիլային լոգարաններ, լվացարաններ, զուգարանակոնքեր, միզարաններ, ցնցուղարաններ, լոգախցիկներ, բալնեոլոգիական և հիդրոմերսող սարքավորումների՝ բուժական, ցեխի, հանքային, հիդրոմերսող ավազաններ, ՍՊԱ պատիճներ, հիդրոմերսող սարքավորումների եզրեր մշակում են միջոցի լուծույթով, որի ծախսի սահմանված չափաքանակը սանիտարա-տեխնիկական սարքավորման մշակման ժամանակ շփման եղանակով կազմում է 150 մլ/մ^2 մակերես, ոռոգման եղանակով՝ 300 մլ/մ^2 մակերես (հիդրոպուլտի, ավտոմաքսի օգտագործմամբ), 150 մլ/մ^2 մակերես («Կվազար» տեսակի ցողացրիչի օգտագործմամբ): Ոռոգման եղանակով ախտահանումն իրականացնում են անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ: Սանիտարատեխնիկական սարքավորումների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 7-ում:

38. Մշակման մեթոդաբանություն՝ լոգարանների, լվացարանների, լոգախցիկների մակերեսին քսում են միջոցի սահմանված խտությամբ և քանակով աշխատանքային լուծույթ, մոտ 1 րոպե իրականացնում են մակերեսի մեխանիկական մանրակրկիտ մաքրում՝ մաքրման օժանդակ պարագաներով (օրինակ՝ լաթ, սպունգ), առավել ուշադրություն հատկացնելով դժվար հասանելի տեղերի մշակմանը (ծորակի և հոսարանի շուրջ), սպասում են պահաժամը, ախտահանիչի մնացորդները լվանում են ջրով:

39. Զուգարանակոնքերի և միզարանների արդյունավետ մշակման համար մակերեսներին առկա կենսաբանական աղտոտվածությունը (կղանք, մեզ և այլն)

նախօրոք նվազացնում են, լվանում ջրով: Միջոցի սահմանված խտությամբ և քանակով աշխատանքային լուծույթը (աղյուսակ 7) ներմուծում են մակերեսին՝ շփման կամ ոռոգման եղանակով: Մոտ 1 րոպե իրականացնում են մակերեսի մեխանիկական մաքրում՝ մաքրման օժանդակ պարագաներով (օրինակ՝ խոզանակ), առավել ուշադրություն հատկացնելով դժվար հասանելի տեղերի մշակմանը (զուգարանակոնքի օղագոտու տակ), պահաժամից հետո զուգարանակոնքը լվանում են ջրով:

40. Բալնեոլոգիական և հիդրոմերսող սարքավորումների մաքրումն ու ախտահանումն իրականացվում է տվյալ բժշկական կամ այլ կազմակերպության սահմանած կանոնակարգին համապատասխան՝ հաշվի առնելով սարքավորման արտադրողի առաջարկները:

41. Մշակման մեթոդաբանություն՝ մաքրման նպատակով լոգարանների ու ավազանների պատերին շփման կամ ոռոգման եղանակով լաթի, սպունգի օգնությամբ քսում են սահմանված խտությամբ և քանակով աշխատանքային լուծույթ (աղյուսակ 7), սպասում են պահաժամը, ախտահանիչի մնացորդները լվանում են ջրով:

42. Հիդրոմերսող սարքավորումների ուրվագծերի մշակման մեթոդաբանություն՝ ավազանը լցնում են 18-20°C ջրով, ավելացնում են միջոց այն քանակությամբ, որն անհրաժեշտ է 0,2% խտությամբ (200 գրամ (20 սաշե-փաթեթ 10 գ) 100 լիտրին, 300 գրամ (30 սաշե-փաթեթ 10 գ) 150 լիտրին, 400 գրամ (40 սաշե-փաթեթ 10 գ) 200 լ ջրին): Ախտահանման նպատակով համակարգի մեջ աշխատանքային լուծույթը մղելու համար պոմպը 5 րոպե միացնում են, այնուհետև պոմպը անջատում և ավազանից դուրս թափում ախտահանիչը: Ավազանը լցնում են մաքուր տաք կամ սառը ջրով, պոմպը միացնում 3 րոպե, անջատում պոմպը, դուրս թափում ջուրը և պարզաջրում ավազանը:

43. Սանիտարատեխնիկական սարքավորումներից ժանգի, կրային նստվածքի հետքերը նախօրոք մաքրում են հատուկ թթվային լվացող միջոցներով:

Աղյուսակ 7

Բժշկական և այլ կազմակերպություններում սանիտարատեխնիկական, բալնեոլոգիական և հիդրոմերսող սարքավորումների ախտահանման ռեժիմները միջոցի լուծույթներով տարբեր էթիոլոգիայի վարակների համար

	Առարկաների և օբյեկտների տեսակը, նյութը և աղտոտվածության աստիճանը

Վարակի էթիոլոգիան	Սանիտարատեխնիկական սարքավորում				Բալնեոլոգիական և հիդրոմերսող սարքավորումների ներքին մակերեսներ			
	Սարքավորման մակերես՝ առանց տեսանելի աղտոտվածության		Սարքավորման մակերես՝ տեսանելի աղտոտվածությամբ		Սարքավորման մակերես՝ առանց տեսանելի աղտոտվածության		Սարքավորման մակերես՝ տեսանելի աղտոտվածությամբ	
	Ախտահանման եղանակը՝ ոռոգում և շփում							
	Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ պատրաստուկի %							
	%	րոպե	%	րոպե	%	րոպե	%	րոպե
Մանրէային (տուբերկուլոզից բացի)	0,2	30	0,5	30	1,0	10	1,0	15
	0,5	15	1,0	15				
	1,0	10	2,0	10	2,0	5	2,0	10
	2,0	5	---					
Վիրուսային	0,2	30	0,5	30	1,0	10	2,0	10
	0,5	15	1,0	15				
	1,0	10	2,0	10				
Սնկային (կանդիդոզ)	0,2	30	0,5	30	1,0	10	2,0	10
	0,5	15	1,0	15				
	1,0	10	2,0	10				
Սնկային (դերմատոֆիտիա)	1,0	30	1,0	60	2,0	15	2,0	30
	2,0	15	2,0	30				
Բորբոսասնկեր	1,0	30	1,0	60	1,0	30	1,0	60
Տուբերկուլոզ[2,3]	1,0	30	1,0	60	2,0	15	2,0	30
	2,0	15	2,0	30				

Նշում [1] Առարկաներն ու օբյեկտները ներկայացված են սույն հրահանգի 3, գլխում
2, Այս տեսակի ախտածին միկրոօրգանիզմների ի հայտ գալը կապված է կենսաբանական հեղուկների առկայության հետ
3 Թեսթավորվել է Mycobacterium terrae-յի վրա:

44. Բժշկական և այլ կազմակերպություններում կիրառվող օժանդակ պարագաներն ու օբյեկտները՝ պացիենտի խնամքի պարագաներ, մաքրման պարագաներ, ձեռնոցով ձեռքեր, մշակում են հաշվի առնելով չափսերը՝ մանր, խոշոր, կառուցվածքային նյութը՝ հարթ, ոչ ծակոտկեն (մետաղ, ապակի, պլաստիկ), ծակոտկեն (ռետին, գործվածք), աղտոտվածության աստիճանը՝ տեսանելի և առանց տեսանելի աղտոտվածության: Այս առարկաների և օբյեկտների ախտահանումն իրականացնում են շփման և ընկղմման մեթոդով, ընդ որում սահմանված է հետևյալ չափաքանակը՝ շփման եղանակով՝ 100 մլ/մ^2 մակերես, ողողման եղանակով՝ 300 մլ/մ^2 մակերես (հիդրոպուլտի, ավտոմաքսի օգտագործմամբ), ողողման եղանակով՝ 150 մլ/մ^2 մակերես («Կվազար» տեսակի ցողացրիչի օգտագործմամբ): Օժանդակ պարագաների և օբյեկտների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 8-ում:

45. Պացիենտի խնամքի պարագաները (մահճակալի հարմարանքներ, զուգարանի նստոց, նստելատեղ, աստիճան և հարթակ լոգարանի համար, ռետինե գորգեր, զուգարանակոնքի գլխադիր, հենարան զուգարանի համար, սառույցի պարկ, ջեռակ, տակդիր օղեր, շարժական աթոռ-զուգարան, գիշերանոթ, տականոթ, միզընդունիչ (այդ թվում տարաներ զուգարանային պարագաների ախտահանման համար), պոլիմերային պաշտպանիչ ծածկույթներ ներքնակների համար, տակդիր մոմլաթ, մոմլաթե պարկեր կեղտոտ սպիտակեղենի համար, մոմլաթե դոշլիկ, պացիենտի տեղափոխման հարթակ, հաշմանդամի սայլակ, ձեռնափայտ, հենակ, քայլակ, մերսիչ, բռնակ, թեքահարթակ) շփում են միջոցով թրջված լաթով կամ ողողում՝ սույն հրահանգի աղյուսակ 8-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

46. Այլ օժանդակ պարագաները, որոնք օգտագործվում են բժշկական կազմակերպություններում ընթացիկ աշխատանքներում (ռետինե ձեռնոց, ռետինե և կիրզայե ճտքակոշիկ, կաշվից կամ կաշվի փոխարինիչից հողաթափեր, խաղալիք (փայտե, պլաստմասե, ռետինե, մետաղյա)), շփում են միջոցի լուծույթով թրջված լաթով: Խոշոր առարկաները, որոնց շփումը դժվար է, մշակվում են ողողման եղանակով: Խոշոր առարկաները, ինչպես նաև կոշիկի արտաքին և ներքին մակերեսները, որոնց ընկղմումը դժվար է, մշակում են ողողման եղանակով: Մանր պարագաներն

ամբողջությամբ ընկղմում են միջոցի լուծույթի մեջ: Ախտահանումից հետո պարզաջրում են հոսող ջրով 3 րոպե, որից հետո չորացնում են: Ռետինե և պոլիպրոպիլենային գորգերը, ռետինե, կաշվից կամ պոլիմերային նյութերից կոշիկները մշակում են սնկասպան ռեժիմով:

47. Յուրաքանչյուր պացիենտից հետո բուժաշխատողը փոխում է ձեռնոցը: Արյունով կամ կենսաբանական հեղուկներով ձեռնոցների աղտոտման դեպքում՝ հանելու ընթացքում ձեռքերի աղտոտումից խուսափելու համար ձեռնոցների տեսանելի աղտոտվածությունը մաքրում են միջոցի լուծույթով թրջած տամպոնով (անձեռոցիկով), բուժաշխատողների, մանրէաբանական լաբորատորիաների աշխատողների ձեռնոցները, անգամ վարակիչ նյութը ձեռնոցներին թափվելուց ախտահանում են (քլորոպրենային կաուչուկից, լատեքսից, նեոպրենից, նիտրիլից և քիմիական նյութերի նկատմամբ կայուն այլ նյութերի: Ախտահանման կոնտեյների մեջ լցնում են 2,0% խտության միջոցի աշխատանքային լուծույթ, ձեռնոցները հագին՝ ձեռքերն ամբողջովին ընկղմում են ախտահանիչ լուծույթի մեջ 1 րոպե: Ախտահանված ձեռնոցները հանում են և գցում թափոնների օգտահանման համար նախատեսված կոնտեյների մեջ:

48. Մաքրման պարագաները՝ խոզանակ և հատակմաքրիչ, ֆլաունդեր, մոպ, գոգաթիակ, սայլակ, դույլ, զամբյուղ և բաք, լաթեր, անձեռոցիկներ (գործվածքից կամ ոչ գործվածքային նյութից), ինչպես նաև հավաքման մեքենաների տարբեր մասեր և հավաքման տարբեր պարագաներ, ընկղմում են միջոցի լուծույթի մեջ այնպես, որ առարկաները 1 սմ-ից ոչ պակաս շերտով ծածկվեն, ախտահանումից հետո լվանում են ջրով և չորացնում: Խոշոր առարկաները, որոնց մշակումն ընկղմման եղանակով հնարավոր չէ, լուծույթով թրջված լաթով շփում կամ ոռոգում են: Ախտահանումից հետո գույքը լվանում են ջրով, չորացնում են: Մաքրման պարագաների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 8-ում: Գործվածքից կազմված առարկաները մշակում են ընկղմման եղանակով՝ 1 կգ չոր գործվածքին 4 լ աշխատանքային հեղուկ հաշվարկով, պահաժամից հետո առարկաները լվանում են ջրով:

49. Ճաշարանի սպասքը՝ ափսե, բաժակ, գավաթ, դանակ, գդալ, պատառաքաղ, ախտահանումից առաջ նախապես մաքրում են սննդի մնացորդներից, ամբողջովին ընկղմում միջոցի լուծույթի մեջ՝ 2 լ լուծույթը սպասքի 1 հավաքածուին (1 մարդու համար նախատեսված սպասք) հաշվարկով, սպասքը ծածկվում է 1 սմ-ից ոչ պակաս շերտով,

ախտահանումից հետո 3 րոպե լվանում են մաքուր ջրով: Տարբեր նյութերից բաղկացած սպասքն ախտահանվում է առանձին, մետաղական և ապակյա սպասքն ախտահանելիս խուսափում են երկարատև ազդեցության պահաժամից: Սպասքի լվացման առարկաները՝ սպունգ, խոզանակ, ճաշասեղանները մաքրելու լաթ, օգտագործելուց հետո թրջում են միջոցի լուծույթի մեջ, հետո ջրով լվանում և չորացնում: Սպասք լվանալու պարագաները պահում են հատուկ առանձնացված տեղում: Միանվագ օգտագործման սպասքն ախտահանելուց հետո օգտահանում են: Միջոցի աշխատանքային լուծույթներն առանց սննդի մնացորդների սպասքի ախտահանման համար կիրառում են բազմակի՝ լուծույթի պիտանելիության ժամկետում: Գույնի, տեսքի փոփոխության, պղտորվելու դեպքում լուծույթը փոխում են:

Աղյուսակ 8

Բժշկական և այլ կազմակերպություններում մաքրման առարկաների, ճաշարանի սպասքի ախտահանման ռեժիմները միջոցի լուծույթներով տարբեր էթիոլոգիայի վարակների համար

Վարակի էթիոլոգիան	Ախտահանման օբյեկտ													
	Օժանդակ պարագաներ՝ ռետինից, մետաղից, պլաստմասից, ապակուց				Խաղալիքներ՝ ռետինից, մետաղից, պլաստմասսից				Սննդի բլոկի սպասք, այդ թվում՝ մեկանգամյա օգտագործման				Մաքրման պարագաներ	
	Էսթետիկ մաքուր		Կենսաբանական հեղուկներով աղտոտված		Էսթետիկ մաքուր		Կենսաբանական հեղուկներով աղտոտված		Էսթետիկ մաքուր		Կենսաբանական հեղուկներով աղտոտված			
	Ախտահանման եղանակը													
	Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ պատրաստուկի %													
	Շփում, ընկղմում				Ընկղմում				Ընկղմում				Ընկղմում	
	%	րոպե	%	րոպե	%	րոպե	%	րոպե	%	րոպե	%	րոպե	%	րոպե
	0,2	30	0,5	30	0,2	30	0,5	30	0,1	60	0,2	60	0,5	30

Մանրէային (տուբերկուլոզից բացի)	0,5	15	1,0	15	0,5	15	1,0	15	0,2	30	0,5	30	1,0	15
	1,0	10			1,0	10			0,5	15	1,0	15		
Վիրուսային	0,5	30	0,5	60	0,5	30	0,5	60	0,2	60	0,5	60	0,5	60
	1,0	15	1,0	30	1,0	15	1,0	30	0,5	30	1,0	30	1,0	30
	2,0	10			2,0	10			1,0	15	2,0	15		
Սնկային (կանդիդոզ)	0,5	30	0,5	60	0,5	30	0,5	60	0,2	60	0,5	60	0,5	60
	1,0	15	1,0	30	1,0	15	1,0	30	0,5	30	1,0	30	1,0	30
	2,0	10			2,0	10			1,0	15	2,0	15		
Սնկային (դերմատոֆիտիա)	0,5	60	1,0	60	0,5	60	1,0	60	0,5	60	1,0	60	2,0	60
Բորբոսասնկեր	1,0	30	1,0	60	1,0	30	1,0	60	1,0	30	1,0	60	1,0	60
Տուբերկուլոզ	0,5	60	0,5	90	0,5	60	0,5	90	0,5	60	1,0	60	1,0	90
	1,0	30	1,0	60	1,0	30	1,0	60	1,0	30	1,5	30	2,0	60
	2,0	15	2,0	30	2,0	15	2,0	30	2,0	15	2,0	15		

Նշում [1] Առարկաներն ու օբյեկտները ներկայացված են սույն հրահանգի 3, գլխում
2 Թեսթավորվել է Mycobacterium terrae-ի վրա:

50. Բժշկական կազմակերպության սպիտակեղենը՝ անհատական և անկողնային սպիտակեղեն, սրբիչներ, բարուրաշորեր, անձնակազմի պաշտպանիչ հագուստ՝ խալաթ, արտահագուստ, գլխարկ, դիմակ, գլխաշոր և տեքստիլից պատրաստված այլ առարկաներ ախտահանում են: Բամբակից, վուշից, սինթետիկ և խառը թելերից (բացի բուրդ և մետաքս) սպիտակեղենը (այդ թվում նաև օրգանական աղտոտված) ձեռքային և մեքենայացված եղանակով լվացքի մեքենայով լվանալիս նաև սպիտակեցնում են:

Աղյուսակ 9

Միջոցի աշխատանքային լուծույթի

պատրաստման սխեմա սպիտակեղենի ախտահանման համար

Աշխատանքային	Միջոցի խտանյութի (գ) և ջրի (մլ) քանակը, որը պահանջվում է աշխատանքային լուծույթի պատրաստման համար

լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	1 կգ		5 կգ		10 կգ	
	միջոց	ջուր	միջոց	ջուր	միջոց	ջուր
0,20	10	4990	50	24950	100	49900
0,40	20	4980	100	24900	200	49800
0,60	30	4970	150	24850	300	49700

Նշում – Խտանյութի քանակը հաշվարկվել է միջոցի աշխատանքային լուծույթի 5 լ-ը 1 կգ սպիտակեղենին հաշվարկով: Աղյուսակը ներկայացված է 10 մգ-էկվ/լ կոշտությամբ ջրի համար: 10 մգ-էկվ/լ-ից կոշտ ջուր կիրառելիս անհրաժեշտ է միջոցի քանակը ավելացնել 10%-ով:

51. Ձեռքային եղանակով սպիտակեղենի ախտահանման համար կիրառում են 1 կգ չոր սպիտակեղենին 5 լ աշխատանքային լուծույթ հաշվարկով, սպիտակեղենի ախտահանման ռեժիմները ներկայացված են աղյուսակ 10-ում:

52. Չաղտոտված սպիտակեղենն ամբողջությամբ ընկղմում են միջոցի լուծույթի մեջ, տարան փակում կափարիչով, սպասում ազդեցության պահաժամին: Ախտահանումից հետո սպիտակեղենը լվանում են սինթետիկ լվացող միջոցով: Լվացումն ախտահանման հետ մեկ փուլում համակցելիս՝ սինթետիկ լվացող միջոցը լցնում են միջոցի լուծույթի հետ: Լվանալուց հետո սպիտակեղենը պարզաջրում են, ազատվում միջոցի մնացորդներից:

53. Արյունով կամ կենսաբանական հեղուկներով աղտոտված սպիտակեղենը (այդ թվում թաշկինակները, թքամանների առդիր գրպանիկները՝ ֆլանելից պատյանները) նախապես, կափարիչով տարողության մեջ, 20 րոպե թրջում են միջոցի 30-40^{0}C լուծույթում: Թրջելուց հետո սպիտակեղենը տեղափոխում են միջոցի աշխատանքային լուծույթով տարողության մեջ ախտահանման կամ սինթետիկ լվացող միջոցով լվանալը ախտահանման հետ համակցելու համար: Սպիտակեղենն ամբողջությամբ ընկղմում են միջոցի լուծույթի մեջ, տարան փակում կափարիչով, սպասում ազդեցության պահաժամին: Ախտահանումից հետո սպիտակեղենը լվանում են սինթետիկ լվացող միջոցով: Լվացումն ախտահանման հետ մեկ փուլում համակցելիս՝ սինթետիկ լվացող միջոցը լցնում են միջոցի լուծույթի հետ: Լվանալուց հետո սպիտակեղենը պարզաջրում են, ազատվում միջոցի մնացորդներից: Տուբերկուլոզով հիվանդի թաշկինակը, թքամանների առդիր գրպանիկները՝ ֆլանելից պատյաններն, ախտահանում են միայն կենսաբանական հեղուկներով աղտոտված, միկոբակտերիայի նկատմամբ

արդյունավետ ախտահանման ռեժիմով: Այդ առարկաներն ախտահանում են ընդհանուր սպիտակեղենից առանձին: Միջոցի աշխատանքային լուծույթն ունի սպիտակեցնող և բծերը մաքրող հատկություն:

Աղյուսակ 10

Սպիտակեղենի ախտահանման ռեժիմները միջոցի լուծույթներով տարբեր էթիոլոգիայի վարակների համար

Մշակման ձեռքային եղանակ

Լուծույթի նախնական ջերմաստիճանը[1] ^{0}C	Ըստ միջոցի խտությունը %	Վարակի էթիոլոգիան				Մշակման փուլերը/ ախտահանման եղանակները
		Մանրէային (տուբերկուլոզից բացի)	Վիրուսային	Սնկային (կանդիդոզ)	Սնկային (դերմատոֆիտիա), տուբերկուլոզ[2]	
Բժշկական կազմակերպության կենսաբանական հեղուկներով չաղտոտված սպիտակեղեն (այդ թվում անձնակազմի պաշտպանիչ հագուստ՝ խալաթ, գլխարկ, գլխաշոր, դիմակ)						
30-40	0,4	60	60	-	-	Ախտահանում /ընկղմում
	0,6	30	30	45	-	
60-65	0,2	60	60	60	-	
	0,4	20	20	30	60	
	0,6	15	15	20	-	
90	-	-	-	-	30	
Բժշկական կազմակերպության կենսաբանական հեղուկներով՝ արյուն, մեզ, կղանք, խորխ աղտոտված սպիտակեղեն (այդ թվում անձնակազմի պաշտպանիչ հագուստ՝ խալաթ, գլխարկ, գլխաշոր, դիմակ)						
30-40	0,2	20	20	20	20	Նախնական թրջում/ընկղմում
	0,4	60	60	-	-	

30-40	0,6	30	30	45	-	Ախտահանում /ընկղմում
60-65	0,2	60	60	60	-	
	0,4	20	20	30	60	
	0,6	15	15	20	-	
90	0,6	-	-	-	30	

Նշում[1] ախտահանման ժամանակ ջերմաստիճանը չի պահպանվում

2– Թեսթավորվել է Mycobacterium terrae-ի վրա:

54. Մեքենայացված եղանակով սպիտակեղենի ախտահանումն ու լվացումը համակցում են մեկ փուլում: Մշակումն իրականացնում են լվացքի մեքենայի կիրառվող ծրագրին և վարակի ռեժիմին համապատասխան, որը ներկայացված է սույն հրահանգի աղյուսակ 11-ում: Մեքենայացված եղանակով սպիտակեղենի ախտահանումն իրականացնում են 1 կգ չոր սպիտակեղենին 5 լ աշխատանքային լուծույթ հաշվարկով:

55. Մշակման մեթոդաբանություն՝ սպիտակեղենը տեղավորում են լվացքի մեքենայում, միջոցն ավելացնում են լվացքի փոշու համար նախատեսված հատվածում կամ անմիջապես թմբուկի մեջ: Ընտրում են լվացքի մեքենայի համապատասխան ծրագիրը, ախտահանումն ու լվացումն ավարտելուց հետո սպիտակեղենը պարզաջրում են: Տուբերկուլոզով հիվանդների արյունով կամ կենսաբանական հեղուկներով աղտոտված սպիտակեղենի լվացման համար (այդ թվում թաշկինակները, թքամանների առդիր գրպանիկները՝ ֆլանելից պատյանները) ընտրում են ռեժիմ, որի մեջ ներառված է նախնական լվացում միջոցի 30-40^{0}C լուծույթում: Տուբերկուլոզով հիվանդի թաշկինակը, թքամանների առդիր գրպանիկները՝ ֆլանելից պատյաններն, ախտահանում են միայն կենսաբանական հեղուկներով աղտոտված, միկոբակտերիայի նկատմամբ արդյունավետ ախտահանման ռեժիմով: Այդ առարկաներն ախտահանում են ընդհանուր սպիտակեղենից առանձին:

Աղյուսակ 11

Սպիտակեղենի ախտահանման ռեժիմները միջոցի լուծույթներով տարբեր էթիոլոգիայի վարակների համար

Մշակման մեքենայացված եղանակ

Լուծույթի նախնական ջերմաստիճանը[1] ^{0}C	Ըստ պատրաստուկի լուծույթի խտությունը %	Վարակի էթիոլոգիան				Մշակման փուլերը/ ախտահանման եղանակները
		Մանրէային (տուբերկուլոզից բացի)	Վիրուսային	Սնկային (կանդիդոզ)	Սնկային (դերմատոֆիտիա), տուբերկուլոզ[2]	
Բժշկական կազմակերպության կենսաբանական հեղուկներով չաղտոտված սպիտակեղեն (այդ թվում անձնակազմի պաշտպանիչ հագուստ՝ խալաթ, գլխարկ, գլխաշոր, դիմակ)						
60-65	0,4	60	60	60	-	Ախտահանում լվացման հետ համակցված մեկ փուլում /ընկղմում
	0,6	30	30	45	-	
90	0,4	-	-	-	60	
	0,6	-	-	-	30	
Բժշկական կազմակերպության կենսաբանական հեղուկներով՝ արյուն, մեզ, կղանք, խորխ աղտոտված սպիտակեղեն (այդ թվում անձնակազմի պաշտպանիչ հագուստ՝ խալաթ, գլխարկ, գլխաշոր, դիմակ)						
30-40	0,2	20	20	20	20	Նախնական թրջում/ընկղմում
60-65	0,4	60	60	60	-	Ախտահանում լվացման հետ համակցված մեկ փուլում /ընկղմում
	0,6	30	30	30	-	
90	0,4	-	-	-	60	
	0,6	-	-	-	30	

Նշում[1] ախտահանման ժամանակ ջերմաստիճանը չի պահպանվում:

2– Թեսթավորվել է Mycobacterium terrae-ի վրա:

56. Սպիտակեղենի սովորական լվացման դեպքում միջոցը կիրառվում է որպես լվացքի փոշու ակտիվարար, 5 կգ չոր սպիտակեղենին 20 գ քանակով միջոցն ավելացնում են լվացքի փոշուն:

57. Սպիտակեղենի սպիտակեցման և բծերի մաքրման համար ձեռքային եղանակով մշակելիս միջոցը լուծում են +30-40^{0}C ջրում՝ 10 գ փոշին 1 լ ջրում հաշվարկով: Սպիտակեղենն ընկղմում են լուծույթի մեջ, սպասում 30-60 րոպե, այնուհետև լվանում ջրով: Մեքենայացված մշակման ժամանակ թրջելու կամ հիմնական լվացման փուլում լվացքի փոշուն ավելացնում են 1 կգ սպիտակեղենին 10-20 գ միջոցի փոշի հաշվարկով, լվացքի ջերմաստիճանը 40-90°C է՝ կախված մշակվող գործվածքի կազմից:

58. Օդափոխության և օդորակման համակարգի (կենցաղային օդափոխիչներ, սպլիտ-համակարգեր, մուլտիզոնալ սպլիտ-համակարգեր, տանիքի օդափոխիչներ և այլն) իրականացնում են փոշեցրման, ընկղմման և շփման եղանակներով սույն հրահանգի աղյուսակ 20-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Ախտահանումից առաջ օդափոխության համակարգերն անջատում են հոսանքի աղբյուրից (բացի օդի մաքրման և սառեցման խցիկի մշակումը):

59. Միջոցի լուծույթի ծախսի սահմանված չափաքանակը մակերեսների մշակման ժամանակ կազմում է շփման եղանակով՝ 150 մլ/մ^2 մակերեսի, ոռոգման եղանակով՝ 400 մլ/մ^2 մակերեսի (հիդրոպուլտի կամ ավտոմաքսի օգտագործմամբ), ոռոգման եղանակով՝ 250 մլ/մ^2 մակերեսի («Կվազար» տեսակի ցողացրիչ), փոշեցրման եղանակով՝ 150 մլ/մ^2 մակերեսի համար:

60. Մշակման մեթոդաբանություն՝ սարքավորումների մակերեսներն ու օդային ֆիլտրը նախապես լվանում են սոդաօճառային լուծույթով: Համակարգերի մակերեսներն ախտահանում են միջոցի լուծույթով թրջված լաթով, շփման կամ ոռոգման եղանակներով: Օդային ֆիլտրերի ախտահանումն իրականացնում են միջոցի լուծույթի մեջ ընկղմման եղանակով: Ածխային ֆիլտրը փոփոխման ենթակա է: Օդափոխիչ համակարգերի մակերեսներն ու կառուցվածքային տարրերն ախտահանում են միջոցի լուծույթով թրջված լաթով, շփման կամ ոռոգման եղանակով: Նախկինում օգտագործված ֆիլտրող տարրերի ախտահանումն իրականացնում են միջոցի աշխատանքային լուծույթում թրջումով: Ախտահանումից հետո ֆիլտրերն օգտահանում են: Ախտահանման պահաժամից հետո, մշակված օբյեկտները լվանում են ջրով լաթի օգնությամբ, չորացնում և օդափոխում: Աշխատելու ընթացքում

օդափոխիչի օդի մաքրման և սառեցման խցիկն ախտահանում են ոռոգման և աէրոզոլացման եղանակով՝ հանած ֆիլտրող տարրերով, սենքից օդափոխման համակարգ օդի ներհոսքի ընթացքում:

61. Օդի դեզոդորացման, հոտերի չեզոքացման, ախտահանման մեթոդաբանությունը՝ իրականացնում են սենքերի մակերեսների նախնական ախտահանում: Ապահովում են սենքի հերմետիկություն, փակում են դռներն ու պատուհանները, անջատում ներձիգ-արտաձիգ օդափոխությունը: Համապատասխան տեխնիկական սարքավորման (աէրոզոլների գեներատոր) օգնությամբ իրականացնում են միջոցի աշխատանքային լուծույթի փոշեցրում սույն հրահանգի աղյուսակ 20-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Աշխատանքային լուծույթի ծախսի սահմանված չափաքանակը 10 մլ/մ^2 է: Ախտահանման ավարտից հետո սենքը 15 րոպե օդափոխում են:

Աղյուսակ 12

Օդափոխության և օդորակման համակարգի, ինչպես նաև օդի ախտահանման ռեժիմները միջոցի աշխատանքային լուծույթով

Մշակվող օբյեկտներ	Լուծույթի խտությունն ըստ միջոցի %	Ազդեցության պահաժամը, րոպե	Ախտահանման եղանակը
Կենտրոնական և կենցաղային օդափոխիչների և ընդհանուր օդափոխանակության բաժիններ, օդընդունիչ և օդաբաշխիչներ	0,2	60	Շփում կամ ոռոգում
	0,5	30	
Օդային ֆիլտրեր	1,0	60	Ընկղմում
	1,5	30	
Ռադիատորների վանդակաճաղեր, գլխադիրներ, կոնդենսատի կուտակիչներ	0,5	60	Շփում
	1,0	30	
Օդամուղներ	1,0	60	Ոռոգում
	1,5	30	

Սենքերի օդի մշակում	Մանրէային վարակներ (տուբերկուլոզից բացի)	0,2	30	Փոշեցրում աէրոզոլների գեներատորի միջոցով
		0,5	45	
	Վիրուսային վարակներ	0,5	45	
		1,0	30	
	Սնկային վարակներ	0,5	60	
		1,0	45	
	Տուբերկուլոզի դեպքում[1]	1,0	60	

Նշում [1] –մշակման ռեժիմներն արդյունավետ են տուբերկուլոզի միկոբակտերիայի նկատմամբ: Թեսթավորված է *Myco-bacterium terrae-յի վրա:*

5. ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ՄԻՋՈՑԻ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐՈՎ ՆԵՐՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՎԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՐՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

62. Մշակման մեթոդաբանություն: Ստացիոնարում (բաժանմունքում) ներհիվանդանոցային վարակի (ՆՀՎ) հարուցչի հայտնաբերման ժամանակ, ներառյալ ժամանակակից հոսպիտալային (կլինիկական) լայն դեղորայքակայուն շտամները, պացիենտի հետ շփում ունեցող բոլոր օբյեկտների (ներառյալ սենքերի մակերեսները, կահավորանքի և խնամքի պարագաները, բժշկական արտադրատեսակները, արտադրությունները և կենսաբանական հեղուկները, բժշկական թափոնները) ախտահանումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 11-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

Աղյուսակ 13

Ներհիվանդանոցային վարակների հարուցիչներով, ներառյալ ժամանակակից հոսպիտալային (կլինիկական) շտամներով[1,2,3] բաղարկված տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմները[4] միջոցի լուծույթներով

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	Ախտահանման պահաժամը, րոպ	Մշակման եղանակը

Սենքերի մակերեսները, կոշտ կահույք, սարքեր, սարքավորումներ առանց օրգանական աղտոտվածության	0,5	30	Շփում, ոռոգում
Սենքերի մակերեսները, կոշտ կահույք, սարքեր, սարքավորումներ օրգանական աղտոտվածությամբ	0,5	60	Շփում, ոռոգում
Դեղատնային և լաբորատոր սպասք (փորձանոթներ,պիպետներ, Պետրիի թասիկներ, առարկայական ապակիներ, ռետինե տանձիկներ, փողրակներ և այլն), սպասքի լվացման համար օգտագործվող առարկաները	0,5	60	Թրջում
Ռետինից և այլ պոլիմերային, ծակոտեն նյութերից պատրաստված դեղատնային և լաբորատոր սպասք (ռետինե տանձիկներ, փողրակներ և այլն)	0,5	60	Թրջում
Բժշկական արտադրատեսակներ (վիրաբուժական, գինեկոլոգիական, ատամնաբուժական գործիքներ, էնդոսկոպներ)՝ հարթ, ոչ ծակոտկեն մակերեսով, պարզ կառուցվածքով:	1,0	30	Ընկղմում
Բժշկական արտադրատեսակներ (վիրաբուժական, գինեկոլոգիական, ատամնաբուժական գործիքներ, էնդոսկոպներ)՝ ծակոտկեն մակերեսով, բարդ կառուցվածքով	1,0	60	Ընկղմում
Ճաշարանային սպասք, այդ թվում միանվագ օգտագործման՝ առանց սննդի մնացորդների	0,5	30	Թրջում
Ճաշարանային սպասք, այդ թվում միանվագ օգտագործման՝ սննդի մնացորդներով	0,5	60	Թրջում
Սպիտակեղեն՝ առանց հեղուկներով աղտոտվածության	0,5	60	Թրջում
Սպիտակեղեն, աղտոտված հեղուկներով (արյուն, խորխ, մեզ,	1,0	60	Թրջում

կղանք և այլ կենսաբանական հեղուկներ)			
Տականոթներ, այդ թվում՝ բիոթաղանթի պարունակության կասկածով	1,0	60	Թրջում
Սանիտարատեխնիկական սարքավորումներ	0,5	60	Շփում, ոռոգում
Մաքրման պարագաներ	1,0	60	Թրջում

Նշումներ [1]- Տվյալ ռեժիմներն օգտագործվում են ստացիոնարում (բաժանմունքում) ներհիվանդանոցային վարակների հարուցիչների հայտնաբերման դեպքում

[2]-թեստավորված է օգտագործելով Klebsiella pneumoniae 22, Pseudomonas aeruginosa, Acinetobacter baumanii 221, Staphylococcus haemolyticus 39.

[3]- Գրամբացասական մանրէներ Klebsiella pneumoniae 22, Pseudomonas aeruginosa, Acinetobacter baumanii 221, ներառյալ ժամանակակից հոսպիտալային (կլինիկական) շտամները

[4]-Գրամդրական մանրէներ Staphylococcus haemolyticus 39, ներառյալ ժամանակակից հոսպիտալային (կլինիկական) շտամները

6. ՄԻՋՈՑԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ ՀԱՏՈՒԿ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՎԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՐՈՒՑԻՉՆԵՐՈՎ ԲԱՂԱՐԿՎԱԾ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԻՆ

63. Միջոցի աշխատանքային լուծույթները կարող են օգտագործվել տարբեր օբյեկտների ախտահանման համար հատուկ վտանգավոր վարակների՝ խոլերայի, տուլարեմիայի, բրուցելոզի և սիբիրյան խոցի օջախներում: Ախտահանման ռեժիմները հատուկ վտանգավոր վարակների օջախներում ներկայացված է սույն հրահանգի աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14

Խոլերայի, տոլարեմիայի, բրուցելոզի, սիբիրյան խոցի հարուցիչներով և սպորներով բաղարկված տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմներ[1] միջոցի լուծույթներով

Ախտահանվող օբյեկտ	Վարակի էթիոլոգիան		Մշակման եղանակը
	Խոլերա, տուլարեմիա, բրուցելոզ	Մանրէների սպորները[2,3], այդ թվում սիբիրյան խոցի	
	Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի %, ախտահանման պահաժամը՝ րոպե		

	%	րոպե	%	րոպե	
Սենքերի մակերեսներ, կոշտ կահույք, սարքավորումներ, սարքեր,	0,20	30	2,0	120	Շփում կամ ոռոգում
Օրգանական հեղուկներով աղտոտված սենքերի մակերեսներ, կոշտ կահույք, սարքեր, սարքավորումներ	0,20	60	3,0	120	Շփում կամ ոռոգում
	0,5	30	4,0	60	
Օդափոխության և օդորակման համակարգեր	0,2	60	2,0	120	Շփում կամ ոռոգում
	0,5	30			
Սենքերի օդային միջավայր, սարքեր և սարքավորումներ	0,20	60	2,0	120	աէրոզոլացում
Սանիտարատեխնիկական սարքավորումներ	0,20	60	2,0	120	Շփում կամ ոռոգում
	0,5	30			
Սպասք առանց սննդի մնացորդների	0,20	60	2,0	120	Ընկղմում
	0,5	30			
Սպասք սննդի մնացորդներով	0,5	120	3,0	120	Ընկղմում
	1,0	60			
Լաբորատոր սպասք	0,5	120	3,0	120	Ընկղմում
	1,0	60			
Սպիտակեղեն առանց արտաթորանքներով աղտոտվածության	0,20	30	-	-	Թրջում
	0,5	30			
Սպիտակեղեն՝ արտաթորանքներով աղտոտված	0,5	120	3,0	120	Թրջում
	1,0	60			
Խնամքի պարագաներ, խաղալիքներ	0,20	60	2,0	120	Ընկղմում կամ ոռոգում
	0,5	30			

Կոռոզիայի նկատմամբ կայուն մետաղներից, ապակուց, պլաստմասից, ռետինից պատրաստված բժշկական արտադրատեսակներ	0,20	60	2,0	120	Շփում կամ ոռոգում
	0,5	30			
Կուվեզներ, բարուրասեղաններ, ինչպես նաև նորածնային բաժանմունքների բոլոր առարկաները	0,20	60	2,0	120	Շփում կամ ոռոգում
	0,5	30	2,0	120	
Բժշկական թափոններ (մեկանգամյա օգտագործման բժշկական արտադրատեսակներ, սպիտակեղեն, վիրակապական նյութ, անձնակազմի արտահագուստ)	1,0	120	10,0	120	Թրջում
Հեղուկ արտադրություններ (փսխման զանգված, կղանք, մեզ, արյուն, շիճուկ, սերմնահեղուկ, հեշտոցային արտազատուկներ, պլևրալ հեղուկ, պերիկարդիալ հեղուկ, ասցիտիկ հեղուկ, լվացման ջրեր և այլ կենսաբանական հեղուկներ)	3,0	120	10,0	120	Խառնել լուծույթին 1:2 հարաբերությամբ
	փոշի	60	փոշի	120	Խառնել թափոնները փոշուն 1:10 հարաբերությամբ
Մաքրման պարագաներ, լաթեր	0,5	120	6,0	120	Թրջում
	1,0	60			
Տականոթներ	1,0	120	6,0	120	Ընկղմում

Նշումներ [1]- Ախտահանումն իրականացվում է աշխատանքային լուծույթների ջերմաստիճանի $18^0C\pm2$ից ոչ պակաս պայմաններում

[2]-ոչնչանում են մանրէների սպորները (անաէրոբ վարակների և սիբիրյան խոցի հարուցիչները,)
[3]-սիբիրյան խոցի հարուցիչներով բաղարկված օբյեկտների ախտահանումն երաշխավորված է միայն կենսաբանական հեղուկներով աղտոտվածության բացակայության դեպքում:

7. ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԹԱՓՈՆՆԵՐ

64. Բժշկական թափոնների ախտահանումը բժշկական և այլ կազմակերպություններում[20] իրականացվում է գործող սանիտարական կանոններին համապատասխան:

65. Միջոցը և նրա աշխատանքային լուծույթներն օգտագործվում են հետևյալ թափոնների և նրանց հավաքման տարաների մշակման համար՝

1) Կենսաբանական հեղուկներով աղտոտված մեկանգամյա օգտագործման բժշկական արտադրատեսակներ՝ մետաղից, ապակուց, պլաստմասից, ռետինից,

2) Կենսաբանական հեղուկներով աղտոտված վիրակապական նյութ, անձնակազմի արտահագուստ, մեկանգամյա օգտագործման սպիտակեղեն

3) Հեղուկ թափոններ, լվացման ջրեր

4) Կենսանյութ (մեզ, կղանք, խորխ, էնդոտրախեալ ասպիրատ, փոխման զանգված, ողնուղեղային հեղուկ, դրենաժային նյութ, վիրահատական նյութ, լվացման ջրեր, այդ թվում էնդոսկոպիկ, պաթոլոգիաանատոմիական, օրգանական վիրահատական թափոններ (օրգաններ, հյուսվածքներ և այլն), արյուն և արյամբ խառնված կենսահեղուկներ), ինչպես նաև սննդի մնացորդներ:

5) արյան մակարդուկներ, դոնորական արյան և ժամկետանց արյան պրեպարատներ, օգտագործված բժշկական տզրուկներ,

6) բժշկական իմունակենսաբանական պրեպարատների, այդ թվում ԲՑԺ և այլ պատվաստանյութերի և շիճուկների՝ փաթեթի վնասման, ժամկետանց լինելու պատճառով և այլ խախտումների դեպքում օգտահանելուց առաջ,

7) Մանրէաբանական լաբորատորիաների թափոններ (շտամներ, կուլտուրաներ, պատվաստանյութեր, 3-4 դասի ախտածնության վիրուսաբանական վտանգավոր նյութ),

8) Ցիտոստատիկների և գենոտոքսիկ պրեպարատների (Գ դասի թափոններ) ապակտիվացում, ինչպես նաև այն աշխատավայրի մակերեսների ապակտիվացում, որտեղ իրականացվել է աշխատանք նշված դեղամիջոցների հետ,

9) Շենքերի աղբահեռացման համակարգ, ներառյալ աղբահեռացման սարքավորումներ, աղբատար մեքենաներ, աղբարկղեր և այլն,

10) Բժշկական կազմակերպության բոլոր բաժանմունքների (բացառությամբ վարակիչ, մաշկա-վեներական, հակատուբերկուլոզային) Ա դասի թափոններ, ոչ վարակիչ թափոններ (վարակիչ հիվանդների, պացիենտների կենսաբանական հեղուկների հետ շփում չունեցած):

11) Բ և Գ դասի թափոնների հավաքման տարաներ, պացիենտի արտադրությունների հավաքման տարաներ, լաբորատոր սպասք

12) Խորխից մաքրած թքամաններ

13) Ախտահանման և լվացման պոտենցիալ վարակիչ աշխատանքային լուծույթներ, որոնք կիրառվում են բժշկական արտադրատեսակների ախտահանման հետ չհամակցված մաքրման նախամանրէազերծման մշակման փուլում:

14) Լվացման ջրեր, որոնք առաջանում են բժշկական արտադրատեսակների ախտահանման հետ չհամակցված մաքրման փուլում ախտահանիչներով աշխատելիս:

66. Բ և Գ դասի թափոններն ախտահանվում են թափոնների առաջնային հավաքման տեղերում, ախտահանիչ լուծույթի մեջ ընկղմման եղանակով, հատուկ առանձնացված տարողության մեջ, մեկանգամյա փաթեթով փաթեթավորումից անմիջապես առաջ: Հատուկ ուշադրություն է դարձվում մեծ քանակի կենսաբանական հեղուկներ պարունակող հեղուկ և պինդ թափոններին:

67. Բժշկական կազմակերպության բոլոր բաժանմունքների (բացառությամբ վարակիչ, մաշկա-վեներական), հակատուբերկուլոզային Ա դասի թափոններն ամեն օր լվացվում և ախտահանվում են շփման, ընկղմման և ոռոգման եղանակներով:

68. Ախտահանումից հետո կեղտաջրերը թափվում են բժշկական կազմակերպության կոյուղու մեջ:

69. Բժշկական թափոնների և նրանց հավաքման ու հեռացման բեռնարկղերը մշակում են աղյուսակ 15, 16-ում ներկայացված ռեժիմներով:

70. Կենսաբանական հեղուկներով աղտոտված մեկանգամյա կիրառման մետաղից, ապակուց, պլաստմասից, ռետինից արտադրատեսակների ախտահանումն իրականացվում է թափոնների առաջնային հավաքման տեղերում, կափարիչով փակվող տարողության մեջ ախտահանիչ լուծույթի մեջ ընկղմման եղանակով: Քանդվող արտադրատեսակներն ընկղմվում են քանդված վիճակում: Լուծույթի շերտի

հաստությունն արտադրատեսակների վրա պետք է լինի առնվազն 1 սմ, ախտահանման ժամանակից հետո արտադրատեսակներն օգտահանվում են:

71. Վիրախծուծները, մեկանգամյա անհատական և անկողնային սպիտակեղենը, անձնակազմի հանդերձանքը, դիմակները և այլ տեքստիլ թափոններն ընկղմում են միջոցի լուծույթով, կափարիչով փակվող պլաստմասե կամ արծնապատ առանձին տարայի մեջ և ախտահանում սույն հրահանգի աղյուսակ 13-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Ախտահանումից հետո թափոններն օգտահանվում են:

72. Կենսաբանական թափոնները, ներառյալ արյունը, մեզը, արտաթորանքը, խորխը, էնդոտրախեալ ասպիրատը, փսխման զանգվածները, ողնուղեղային հեղուկը, վիրահատական նյութերը, վերքային էքսուդատը, օրգանական վիրահատական թափոնները (օրգաններ, հյուսվածքներ և այլն), խառնում են միջոցի աշխատանքային լուծույթի կամ խտանյութի հետ (փոշու) կափարիչով փակվող տարայի մեջ և ախտահանում սույն հրահանգի աղյուսակ 13-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Ախտահանումից հետո ախտահանիչ խառնուրդը թափվում է կոյուղի, տարան ախտահանվում է:

73. Նույն կերպ ախտահանում են մակարդուկներով արյունը, դոնորական արյունն ու ժամկետանց արյան պրեպարատները:

74. Մեզին, լվացման ջրերին (հարպտղային հեղուկ, էնդոսկոպների լվացման ջուր և այլն) ավելացնում են անհրաժեշտ քանակի միջոց, խառնում մինչև փոշու լուծվելը, տարան փակում են կափարիչով: Ախտահանումից հետո ախտահանիչ խառնուրդը թափվում է կոյուղի:

75. Քիմիական նյութերին և կենսաբանական աղտոտվածությամբ ջրային լուծույթներին (բժշկական արտադրատեսակների լվացման ժամանակ կիրառած պոտենցիալ վարակիչ աշխատանքային լուծույթները, լվացման ջրերը և արյան լաբորատոր անալիզատորների ջրերը), ավելացնում են անհրաժեշտ քանակության միջոց, տարան փակում են կափարիչով: Ախտահանումից հետո ախտահանիչ խառնուրդը թափվում է կոյուղի:

76. Հիրուդոթերապիայից հետո բժշկական տզրուկներն ընկղմում են միջոցի 0,5 % լուծույթի մեջ, պահում են 30 րոպե, այնուհետև օգտահանում:

77. Կենսաբանական հեղուկներով աղտոտված լաբորատոր սպասքը (փորձանոթ, մելանժեր, վակուտեյներ) ախտահանվում է գործող սանիտարական կանոններին համապատասխան: Լաբորատոր սպասքը միջոցի լուծույթի մեջ ընկղմելիս զգուշանում են արյան մակարդուկների թափվելուց: Տարան վերցնում են ունելիով այնպես, որ նրա մի ճյուղը մի քիչ ներս է մտնում, և թեք վիճակում ընկղմում են լուծույթի մեջ այնպես, որ ամբողջությամբ ծածկվի: Ճիշտ ընկղմելիս օդային պղպջակներ չեն առաջանում, և տարան իջեցվում է հատակ: Բոլոր տարաներն ընկղմելուց հետո ախտահանում են ունելին: Ախտահանումից հետո մեկանգամյա օգտագործման սպասքն օգտահանվում է:

78. Տականոթները, Ե և Բ դասի թափոնների հավաքման բազմակի օգտագործման տարաները մշակում են ախտահանիչ լուծույթի մեջ ընկղմման եղանակով: Ախտահանման ժամանակ տարան ծածկում են կափարիչով, մշակումից հետ լվանում հոսող ջրով, մեկանգամյա օգտագործման տարաներն օգտահանում են:

79. Խորխով թքամանները ախտահանում են տուբերկուլոզի միկոբակտերիայի նկատմամբ արդյունավետ ռեժիմով: Ախտահանումն իրականացնելու նպատակով թքամանը տեղավորում են տարայի մեջ և լցնում են միջոցի լուծույթ: Տարան ծածկում են կափարիչով, պահաժամից հետո թքամանները լվանում են՝ մինչև քլորի հոտի վերանալը:

80. Աղբահեռացման համակարգի սարքավորումների, աղբատար մեքենաների, աղբարկղերի, բժշկական թափոնների հավաքման և հեռացման տարաներն ախտահանում են շփման կամ ընկղմման եղանակով սույն հրահանգի աղյուսակ 13-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

81. Գործածության ոչ պիտանի պատվաստանյութերն ու անատոքսինները (պիտանելիության ժամկետն անց, «սառցային շղթայի» ռեժիմի խախտման, սրվակի ամբողջականության խախտման, սրվակի պարունակության արտաքին տեսքի փոփոխության դեպքում, ինչպես նաև կանխարգելիչ պատվաստանյութերի մնացորդները) ենթակա են ոչնչացման: Ախտահանման համար կիրառում են կափարիչով փակվող պլաստիկ կամ արծնապատ տարաներ: Պատվաստման ընթացքում բացած սրվակները, ֆլակոնները, ներարկիչներն ու ասեղները, վիրախծուծները տեղավորում են միջոցի լուծույթով տարայի մեջ: Լուծույթի մեջ սրվակներն ու ֆլակոնները կորնցագով մանրացվում են, սպասում պահաժամը:

Պատվաստանյութերի ախտահանումն իրականացվում է միջոցի 1,0% լուծույթով, 120 րոպե: Պատվաստանյութերի ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 16-ում: Կենդանի պատվաստանյութերով բաղարկված նյութերի ախտահանումից հետո ենթակա են ֆիզիկական մեթոդով կամ քիմիական նյութերով մանրէազերծման: Պատվաստանյութերի ու անատոքսինների ոչնչացման բոլոր աշխատանքներն իրականացվում են արտահագուստով (խալաթ, գոգնոց, ձեռնոցներ) և անհատական պաշտպանության միջոցներով (դիմակ կամ շնչադիմակ, ակնոց):

82. Ցիտոստատիկների և գենոտոքսիկ պրեպարատների (Գ դասի թափոններ) հավաքումը, ժամանակավոր պահպանումն առանց քիմիական չեզոքացման (ապակտիվացման) արգելվում է: Ապակտիվացման ենթակա են նշված պրեպարատների պատրաստման և օգտագործման ընթացքում առաջացած թափոնները (օգտագործած ֆլակոններ, սրվակներ, ներարկիչներ, ներերակային ներարկման հավաքածուներ, սկարիֆիկատորներ, պրեպարատների մնացորդներով աղտոտված վիրախծուծներ): Ապակտիվացումն իրականացվում է անմիջապես գոյացման վայրում, գոյացումից անմիջապես հետո, կափարիչով փակվող պլաստիկ կամ արծնապատ տարայի մեջ, միջոցի 1,0% խտության աշխատանքային լուծույթում ընկղմում են 120 րոպե պահաժամով: Ապակտիվացած թափոններն օգտահանում են՝ համաձայն Առողջապահության նախարարի 03-Ն հրամանի: Աշխատանքային այն մակերեսները, որոնց վրա պատրաստել են ցիտոստատիկ և գենոտոքսիկ դեղամիջոցներ, ապակտիվացնում են շփման եղանակով, միջոցի 1,0% խտության լուծույթով, 30 րոպե պահաժամով, որից հետո իրականացնում են մակերեսների խոնավ մաքրում: Ցիտոստատիկների և գենոտոքսիկ պրեպարատների թափոնների ապակտիվացումն իրականացնում են մաշկային ծածկույթների, շնչառական օրգանների և աչքերի անհատական պաշտպանության միջոցներով, քարշիչ պահարանում:

Աղյուսակ 15

Բժշկական թափոնների հավաքման տարաների, աղբահավաք սարքավորումների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով

		Վարակի էթիոլոգիան

Մշակվող օբյեկտներ	Նյութը, որից պատրաստված է մշակվող օբյեկտը և աղտոտվածության աստիճանը	Մանրէային, վիրուսային[1], սնկային (կանդիդոզ)		Սնկային (դերմատոֆիտիա), տուբերկուլոզ[2,4]	
		Լուծույթի խտությունն ըստ միջոցի՝ %, պահաժամը՝ րոպե			
		%	րոպե	%	րոպե
Մշակման եղանակները՝ շփում, ոռոգում կամ ընկղմում					
Ա, Բ, Վ դասի թափոնների հավաքման բազմակի օգտագործման տարաներ, կենսաբանական հեղուկներով չաղտոտված	Պլաստիկից, մետաղից և այլ հարթ, ոչ ծակոտեն նյութերից պատրաստված պարզ կառուցվածքով տարաներ, այդ թվում տեսանելի աղտոտվածությամբ	0,5	30	1,0	30
Մշակման եղանակը՝ ընկղմում					
Հիվանդի արտաթորանքների հավաքման տարաներ, լաբորատոր սպասք և մակերեսներ, որտեղ հավաքվել է կենսաբանական նյութը		-	-	1,0	90
		-	-	2,0	60
Խորխից մաքուր թքամաններ		-	-	1,0	120
		-	-	2,0	90
		-	-	3,0	60
Մշակման եղանակները՝ շփում, ոռոգում					
Աղբահավաք սարքավորումներ, աղբարկղեր	Պլաստիկից, մետաղից և այլ հարթ, ոչ ծակոտեն նյութերից պատրաստված պարզ կառուցվածքով տարաներ, այդ	0,20	30	1,0	30

	թվում տեսանելի աղտոտվածությամբ				

Նշումներ [1]- Ճ դասի թափոնների համար
[2]- Բ դասի թափոնների համար
[3]- Ա և Ճ դասի թափոնների ախտահանումն իրականացվում է մանրէային և վիրուսային ռեժիմներով, Բ դասը՝ տուբերկուլոզի
[4]- Թեսթավորված է *Myco-bacterium terrae-յի վրա:*

Աղյուսակ 16

Բժշկական թափոնների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով

Մշակվող օբյեկտ	Նյութը, որից պատրաստված է մշակվող օբյեկտը և աղտոտվածության աստիճանը	Վարակի էթիոլոգիան					
		Մանրէային (բացի տուբերկուլոզից), վիրուսային[1]			Սնկեր, տուբերկուլոզ[2]		
		Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	**Ախտահանման պահածամը, րոպե**	**Մշակման եղանակը**	**Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, %**	**Ախտահանման պահածամը, րոպե**	**Մշակման եղանակը**
Կենսաբանական հեղուկներով[3] աղտոտված միանվագ օգտագործման առարկաներ	Մետաղից, ապակուց, պլաստմասից, ռետինից պատրաստված մեկանգամյա օգտագործման բժշկական արտադրատեսակներ	0,5	30	Ընկղմում	0,5	60	Ընկղմում
					1,0	30	
	Վիրակապական նյութեր, մեկանգամյա օգտագործման սպիտակեղեն, անձնակազմի արտահագուստը և գործվածքից պատրաստված այլ	0,5	60	Ընկղմում	0,5	90	Ընկղմում
		1,0	30		1,0	60	

	արտադրատեսակներ						
Պատվաստանյութեր վիրուսային և մանրէային, այդ թվում կենդանի (ներառյալ ԲՑԺ), անատոքսիններ[4]	Պրեպարատի մնացորդներով սրվակներ (այդ թվում փաթեթավորման վնասվածքով, ժամկետանց), մեկանգամյա օգտագործման ասեղներ, ներարկիչներ, սկարիֆիկատորներ, բամբակյա վիրախծուծներ, անձեռոցիկներ, որոնք առաջացել են պատվաստանյութի ներարկումից հետո	1,0	120	Խառնել լուծույթի հետ 1:2 հարաբերությամբ	1,0	120	խառնել լուծույթի հետ 1:2 հարաբերությամբ
	Լվացման ջրեր, միկրոկենսաբանական լաբորատորիաների թափոններ	1,0	30	Խառնել լուծույթի հետ 1:2 հարաբերությամբ	2,0	60	Խառնել լուծույթի հետ 1:2 հարաբերությամբ
		Փոշի	30	10 գ խառնել 1լ հեղուկի հետ	Փոշի	30	20 գ խառնել 1լ հեղուկի հետ
	Հիվանդի կենսաբանական նյութ, խորխ, շիճուկ, էրիտրոցիտար			Խառնել լուծույթի հետ 1:2			Խառնել լուծույթի հետ

Կենսաբանական հեղուկներ [3,5]	զանգված, ձևավորված կղանք, կղանքա-միզային խառնուրդ, փսխման զանգված, ողնուղեղային հեղուկ, էնդոտրախեալ ասպիրատ, արյուն և արյան հետ խառնված կենսաբանական հեղուկներ	1,0	60	հարաբերությամբ	1,0	120	1:2 հարաբերությամբ
		3,0	30		2,0	90	20 գ խառնել 1լ հեղուկի հետ
		Փոշի	90	15 գ խառնել 1լ հեղուկի հետ	Փոշի	90	30 գ խառնել 1լ հեղուկի հետ
			60	30 գ խառնել 1լ հեղուկի հետ		60	45 գ խառնել 1լ հեղուկի հետ
	Մեզ, բկանցքի ողողման հեղուկ	1,0	30	Խառնել լուծույթի հետ 1:2 հարաբերությամբ	2,0	60	Խառնել լուծույթի հետ 1:2 հարաբերությամբ
		Փոշի	30	10 գ խառնել 1լ հեղուկի հետ	Փոշի	30	20 գ խառնել 1լ հեղուկի հետ
		1,0	30	Խառնել լուծույթ	2,0	30	Խառնել լուծույ

Սննդի մնացորդներ			ի հետ 1:2 հարաբերությամբ			թի հետ 1:2 հարաբերությամբ
	Փոշի	30	10 գ խառնել 1լ հեղուկի հետ	Փոշի		20 գ խառնել 1լ հեղուկի հետ
Լաբորատոր անալիզատորների վացման ջրեր և լուծույթներ	5 գ խառնել 1լ հեղուկի հետ	60	Մանրակրկիտ խառնել	10 գ խառնել 1լ հեղուկի հետ	60	
Ախտահանիչ նյութերի օգտագործված աշխատանքային լուծույթներ, պոտենցիալ ինֆեկցված,որոնք օգտագործվել են գործիքների նախամանրէազերծման մշակման և ախտահանման համար, քիմիական բաղադրիչների և կենսաբանական աղտոտվածության մնացորդային քանակություններ պարունակող ջրային լուծույթներ ինչպես նաև լվացման ջրերը, որոնք առաջացել են գործիքների մշակման այդ փուլերում:	10 գ խառնել 1լ հեղուկի հետ	30		20 գ խառնել 1լ հեղուկի հետ	30	Մանրակրկիտ խառնել

Նշումներ [1]- Ե դասի թափոնների համար
[2]- Բ դասի թափոնների համար
[3]- հեղուկ թափոնների ախտահանումն իրականացնում են հերմետիկ փակվող կափարիչով տարաներում
[4] –Թեսթավորված է *Myco-bacterium terrae-յի վրա:*

83. Վարակիչ հիվանդներին տեղափոխող սանիտարական տրանսպորտը, աղտոտված սպիտակեղենը և բժշկական արտադրատեսակները ախտահանում են՝

ելնելով արտաքին և ներքին մակերեսների աղտոտվածությունից: Տրանսպորտի ախտահանումն իրականացնում են շփման և ոռոգման եղանակով, ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 17-ում: Սննդամթերք տեղափոխող ավտոտրանսպորտը ախտահանում են մանրէային ռեժիմով, ախտահանումից հետո մշակված մակերեսները լվանում են ջրով և չորացնում: Հանրային տրանսպորտը ախտահանում են մանրէային ռեժիմով, իսկ ձեռքերի հետ հաճախակի շփվող մակերեսները՝ սնկային վարակների ռեժիմին համապատասխան: Վիրուսային համաճարակների ժամանակ հանրային տրանսպորտի մակերեսներն ախտահանում են վիրուսային ռեժիմով:

Աղյուսակ 17

Տրանսպորտային միջոցների ախտահանման ռեժիմները միջոցի լուծույթներով տարբեր էթիոլոգիայի վարակների ժամանակ

Ախտահանման օբյեկտ	Լուծույթի խտությունն ըստ ակտիվ նյութի	Վարակի էթիոլոգիան, պահաժամը (րոպե)				Ախտահանման ռեժիմ
		Մանրէային՝ տուբերկուլոզ	Վիրուսային	Սնկային	Տուբերկուլոզ՝ ոլորտ	
	%	րոպե	րոպե	րոպե	րոպե	
Սանիտարական տրանսպորտ (վարակի էթիոլոգիայից կախված)	0,1	60	-	-	-	Շփում, ոռոգում (պինդ մակերեսներ)
	0,2	30	60	60	-	
	0,5	15	30	30	60	
	1,0	10	15	15	30	
	1,5	-	-	-	15	
	2,0	-	-	-	10-	
Հանրային տրանսպորտ	0,1	60	-	-	-	
	0,2	30	60	-	-	
	0,5	15	30	-	-	
	1,0	10	15	-	-	
Հանրային տրանսպորտի ձեռքերի հետ	0,2	-	-	60	-	Մշակում միջոցի լուծույթով
	0,5	-	-	30	-	
	1,0	-	-	15	-	

հաճախ շփվող մակերեսներ						թրջված խոզանակով (փափուկ և ծակոտկեն մակերեսներ)
Սննդամթերք տեղափոխող տրանսպորտ	0,1	60	-	-	-	
	0,2	30	-	-	-	
	0,5	15	-	-	-	
	1,0	10	-	-	-	

Նշում [1] Թեսթավորված է Myco-bacterium terrae-ի վրա

8. ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

84. Սոցիալական ծառայություն մատուցող կազմակերպությունների, հանրակրթական հաստատությունների (ներառյալ մանկական նախադպրոցական, դպրոցական կրթական հաստատությունները), հանրային և վարչական հաստատությունների, արդյունաբերական և քիմիա-դեղագործական արդյունաբերության շուկաների, հանրային սննդի (ռեստորան, սրճարան, ճաշարան և այլն), մթերային առևտրի, դեղատների և այլ տարբեր օբյեկտների ախտահանումն իրականացվում է սույն հրահանգի աղյուսակ 5-ի մանրէային վարակների ռեժիմներով:

85. Տարբեր մակերեսների և սարքավորումների ախտահանումը մարզա-առողջարարական հաստատություններում (ֆիթնես-ակումբ, մարզահամալիր, լողավազան, ակվապարկ), սպասարկման ոլորտի հաստատություններում (բաղնիք, շոգեբաղնիք, վարսավիրանոց, գեղեցկության սրահ և այլն) իրականացվում է սույն հրահանգի աղյուսակ 5-ի սնկային վարակների համար առաջարկվող ռեժիմներին համապատասխան:

86. Մակերեսների, սարքավորումների, գործիքների ախտահանումը բնակչության սպասարկման ոլորտի օբյեկտներում (վարսավիրանոց, գեղեցկության, կոսմետիկական և մերսման սրահներ և այլն) իրականացվում է մանրէների (սենքերում մակերեսներ, սարքավորումների մակերեսներ) կամ սնկային վարակների (ձեռքերի, ոտքերի ավազաններ) ռեժիմներով՝ սույն հրահանգի աղյուսակ 5-ի ռեժիմներին համապատասխան: Կոսմետոլոգիական գործիքներն ախտահանվում են սույն հրահանգի աղյուսակ 5-ում ներկայացված ռեժիմներով:

87. Դատաբժշկական փորձաքննության հաստատություններում, դիահերձարաններում, պաթոլոգիաանատոմիական, կրոնական և թաղման արարողակարգեր կազմակերպող կազմակերպություններում մակերեսների և

օբյեկտների ախտահանումն իրականացվում է վիրուսային վարակների ռեժիմին համապատասխան (աղյուսակ 5) : Դիատար մեքենաներն ախտահանվում են սանիտարական տրանսպորտի ռեժիմով (աղյուսակ 15): Քրեակատարողական հիմնարկներում (բանտ, գաղութ, ճամբար) մակերեսների և օբյեկտների ախտահանումն իրականացվում է սույն հրահանգի աղյուսակ 5-ում ներկայացված տուբերկուլոզի համար առաջարկվող ռեժիմներին համապատասխան:

9. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ, ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՄԱԿՑՎԱԾ ԵՐԿՈՒՍԸ ՄԵԿՈՒՄ

88. Մշակման ենթարկվում են վիրաբուժական, միկրովիրաբուժական, ատամնաբուժական, գինեկոլոգիական, կոսմետոլոգիական գործիքները, բարդ կառուցվածքով սարքավորումների բաղադրիչ մասերը, կոշտ և ճկուն էնդոսկոպները և դրանց կից գործիքները, կուվեզները և դրանց քանդվող բաղադրիչ մասերը, լաբորատոր սպասքը և լաբորատորիայի առարկաները, ատամնաբուժական տպվածքները և կիսահումքերը և այլն:

89. Բժշկական նշանակության արտադրատեսակների և բարդ կառուցվածքով սարքերի և սարքավորումների ախտահանման մաքրման առաձնացված փուլում միջոցի աշխատանքային լուծույթները չեն կիրառվում երկար ժամանակով թրջելու՝ «բժշկական արտադրատեսակները սառեցնելու» համար:

90. Բժշկական նշանակության իրերն օգտագործելուց հետո ենթակա են ախտահանման, նախամանրէազերծման և մանրէազերծման: Թույլատրվում է ախտահանումը և նախամանրէազերծումը իրականացնել մեկ փուլով: Ախտահանումը, այդ թվում՝ համակցված երկուսը մեկում, իրականացնում են ձեռքային (հատուկ այդ նպատակով առանձնացված կափարիչով պլաստմասե կամ արծնապատ (առանց ամբողջականության խախտման) տարաներում) կամ մեքենայացված (լվացող-ախտահանող մեքենաներում, ուլտրաձայնային սարքերում) եղանակներով:

91. Օրգանական աղտոտվածության ֆիքսումը կանխարգելելու նպատակով գործիքները (վիրաբուժական, միկրովիրաբուժական, ատամնաբուժական, գինեկոլոգիական, կոսմետոլոգիական և այլն) օգտագործելուց հետո ընկղմում են աշխատանքային լուծույթի մեջ՝ չթույլատրելով դրանց չորացումը: Մինչ այդ հեռացնում

են տեսանելի աղտոտվածությունը գործվածքից պատրաստված անձեռոցիկների (վիրախծուծների) օգնությամբ: Օգտագործված անձեռոցիկները տեղադրում են առանձին տարայի մեջ և ախտահանում, այնուհետև օգտահանում սույն հրահանգի աղյուսակ 16-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Գործիքներն ընկղմում են այնպես, որ խոռոչները լցվեն աշխատանքային լուծույթով՝ բացառելով օդային խցանների առաջացումը: Քանդվող մասերն ընկղմում են առանձնացված վիճակում, փականային մասեր ունեցող գործիքներն ընկղմվում են բաց վիճակում, մի քանի աշխատանքային շարժում անելով՝ դժվար հասանելի մասեր լուծույթի ներթափանցումն ապահովելու նպատակով: Տարայի և աշխատանքային լուծույթի ծավալը պետք է հնարավորություն ընձեռի գործիքները լիովին ընկղմելու համար, ապահովելով առնվազն 1 սմ աշխատանքային լուծույթի շերտի հաստությունը գործիքների վրա: Շփման եղանակով ախտահանում թույլատրվում է կիրառել այն բժշկական արտադրատեսակների համար, որոնք անմիջական չեն շփվում պացիենտի հետ և որոնց կառուցվածքային առանձնահատկությունները թույլ չեն տալիս իրականացնել մշակում ընկղմման եղանակով: Ախտահանման պահաժամից հետո արտադրատեսակները հանում են տարայի միջից և լվանում ախտահանիչ միջոցի մնացորդներից հոսող խմելու ջրով առնվազն 3 րոպե, լվանալով խողովակները ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով և թույլ չտալով բացթողնված ջուրը լցվի լվացվող արտադրատեսակներով տարայի մեջ: Բժշկական արտադրատեսակների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 18-ում:

92. Ատամնաբուժական արտատպվածքները և ատամնապրոթեզային կիսահումքերը նախապես ջրով լվանում են (օգտագործելով մաշկի անհատական պաշտպանության միջոց՝ ռետինե ձեռնոց, գոգնոց), ախտահանում են դրանք միջոցի լուծույթի մեջ ընկղմման եղանակով: Ախտահանոումից հետո արտատպվածքները և ատամնապրոթեզային կիսահումքերը լվանում են հոսող ջրով յուրաքանչյուր կողմից 30-ական վայրկյան կամ ընկղմում ջրով լի տարայի մեջ 3 րոպե, որից հետո չորացվում են օդում: Միջոցը տպվածքների մշակման համար օգտագործվում է բազմակի՝ լուծույթի պիտանելիության ժամկետի ընթացքում, մշակելով 50 արտատպվածքից ոչ ավելի:

1) Ատամնաբուժական արտածծող համակարգերն ախտահանում են, օգտագործելով միջոցի աշխատանքային լուծույթ 0,5% և 1,0% խտությամբ 1 լ ծավալով, այն բաց թողնելով սարքի արտածծող համակարգով 2 րոպեի ընթացքում: Այնուհետև

թողնում են նրա մեջ ազդեցության համար 0,5% լուծույթը 60 րոպեով, 1,0%-ը՝ 30 րոպեով (այդ ընթացքում արտաձծող համակարգը չի օգտագործվում): Գործողությունն իրականացնում են օրական 1-2 անգամ, այդ թվում աշխատանքային հերթափոխի ավարտից հետո: Արտաձծող համակարգերի ծայրադիրները մաքրում և ախտահանում են պացիենտի մոտ կիրառումից հետո միջոցի աշխատանքային լուծույթի մեջ ընկղմման եղանակով՝ տուբերկուլոզի միկոբակտերիայի նկատմամբ արդյունավետ ռեժիմին համապատասխան՝ սույն հրահանգի աղյուսակ 3-ով: Մասերի և արտաձծող համակարգի վերջնական լվացումը իրականացվում է հոսող խմելու ջրով:

93. Լաբորատոր և դեղատնային անոթները (լաբորատոր գործիքներ, ասեղ, մազանոթ, առարկայական ապակի, փորձանոթ (այդ թվում վակուտեյներներ), մելանժեր, հաշվիչ խցեր, ֆոտոէլեկտրոմետրի կյուվետ, կաթոցիկ, ծայրակալներ, ռետինե տանձեր, բալոններ և այլն), այդ թվում ախտածնության 3-4-րդ խմբի մանրէների հետ աշխատող լաբորատորիաների, ինչպես նաև այդ անոթների լվացման պարագաները ամբողջությամբ ընկղմում են միջոցի լուծույթի մեջ՝ աշխատանքային լուծույթով ամբողջությամբ լցնելով բոլոր հասանելի մակերեսները: Ընկղմումն իրականացվում է՝ խուսափելով օդային խցանների առաջացումից: Լուծույթի շերտի հաստությունը արտադրատեսակների վրա պետք է լինի առնվազն 1 սմ: Ախտահանման ժամանակից հետո անոթները 3 րոպե լվանում են ջրով: Միջոցի լուծույթի ծախսի նորման 2 լ է 10 միավորի համար: Հատուկ ուշադրություն է դարձվում արյունով և այլ կենսաբանական նյութերով աղտոտված լաբորատոր անոթներին: Մեկանգամյա օգտագործման անոթները ազդեցության ժամանակից հետո օգտահանում են: Լաբորատոր անոթների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 18-ում, իսկ արյունով և այլ կենսաբանական նյութերով աղտոտված լաբորատոր անոթների մանրէազերծումը՝ սույն հրահանգի աղյուսակ 15-ում:

94. Բժշկական սարքավորումները (այդ թվում ՈւՁՀ տվիչներ և սարքեր, ֆիզիոթերապևտիկ սարքավորում, դիալիզի սարքավորում, նարկոզա-շնչառական սարքերի, անէսթեզիոլոգիական սարքերի համալրող մասեր և ջերմազգայուն նյութերից այլ քանդովի մասեր) մշակում են շփման, ընկղմման կամ ոռոգման եղանակով: Մշակման ժամանակ հաշվի է առնվում կոնկրետ սարքավորման արտադրողի առաջարկները: Ախտահանումից հետո սարքավորումը 5 րոպե լվանում են ջրով: Մշակումն իրականացում է սույն հրահանգի աղյուսակ 18-ում ներկայացված

ռեժիմներին համապատասխան: Նարկոզա-շնչառական սարքերի, անէսթեզիոլոգիական սարքերի համալրող մասերը (էնդոտրախեալ փող, տրախեոտոմիկ կանյուլա, բերանըմպանային օդատար, դիմակ, անեսթեզիոլոգիական ռետինե խողովակ) ընկղմում են միջոցի լուծույթի մեջ ախտահանման պահաժամով՝ սույն հրահանգի աղյուսակ 18-ին համապատասխան: Ախտահանումից հետո դրանք հանում են լուծույթով տարայից և պարզաջրում միջոցի մնացորդներից մանրէազերծ ջրի հաջորդաբար երկու բաժնեմասերի մեջ՝ յուրաքանչյուրում 5 րոպե, այնուհետև չորացնում են և պահում ասեպտիկ պայմաններում:

95. Կուվեզի և նրա պարագաների մակերեսները տարբեր վարակների ժամանակ մանրակրկիտ շփում են միջոցի լուծույթով թրջված լաթով՝ միջոցի աշխատանքային լուծույթի 100 մլ/մ^2 մշակվող մակերեսի ծախսի նորմայով: Ախտահանումից հետո կուվեզի մակերեսները շփում են կրկնակի՝ մանրէազերծ ջրով առատ թրջված մանրէազերծ գործվածքային անձեռոցիկներով, իսկ այնուհետև մանրէազերծ գործվածքով (օրինակ, բարուրաշորով) շփելով չորացնում են: Ախտահանիչ պահաժամից հետո կուվեզներն օդափոխվում են առնվազն 15 րոպե: Մնացած մասերը (խոնավացուցիչի ռեզերվուար, մետաղական ալեմարիչ, օդակլանիչ փող, ռետինե խողովակ, թթվածնի նախապատրաստման հանգույց) մշակում են, հնարավորինս քանդելով, մաքրում են և ամբողջությամբ ընկղմում համապատասխան աշխատանքային լուծույթով տարայի մեջ: Ախտահանումից հետո բոլոր պարագաները լվանում են մանրէազերծ ջրի մեջ կրկնակի ընկղմման եղանակով (յուրաքանչյուրը 3 րոպե), ինչպես նաև մղելով ջուրը փողերի և ռետինե խողովակների միջով: Պարագաները նույնպես չորացնում են մանրէազերծ գործվածքային անձեռոցիկներով: Կուվեզների մշակման ժամանակ հաշվի է առնվում կուվեզի արտադրողի առաջարկները: Կուվեզների մակերեսների ախտահանումն իրականացվում է առանձին սենքում շփման եղանակով՝ սույն հրահանգի աղյուսակ 18-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Կուվեզների քանդվող մասերի դետալների ախտահանումն իրականացվում է ընկղմման եղանակով մշակման ռեժիմներով. ախտահանումը՝ սույն հրահանգի աղյուսակ 18-ին, նախամանրէազերծումը՝ սխեմա 1-ին, ախտահանումը համակցված նախամանրէազերծման հետ՝ սխեմա 2-ին համապատասխան:

96. Ատամնաբուժական թքամանները, խորխից ազատված, ողողում կամ լցնում են միջոցի լուծույթով ազդեցության ժամանակով, որն ապահովում է տուբերկուլոզի միկոբակտերիայի ոչնչացումը: Մշակումն իրականացվում է սույն հրահանգի աղյուսակ 15-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

Աղյուսակ 18

Բժշկական արտադրատեսակների[1] ախտահանման և մանրէազերծման ռեժիմներ միջոցի լուծույթով

Ախտահանման օբյեկտ	Վարակի էթիոլոգիան			
	Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի), վիրուսային, սնկային (կանդիդոզներ)		Սնկային (դերմատոֆիտիաներ), Տուբերկուլոզ[2]	
	Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, % –ազդեցության ժամանակ, րոպե			
	%	րոպե	%	րոպե
Բժշկական արտադրատեսակների մակերեսներ *Մշակման եղանակը՝ շփում, ողողում*				
Կուվեզներ և մանկական մահճակալներ, կառուցվածքային բարդ սարքերի, սարքավորումների (ներառյալ ՈՒՁՀ-ի տվիչների, կոսմետոլոգիական և վարսավիրական սարքերի) մակերեսներ (այդ թվում հանգույցներ)	0,2	60	0,5	60
	0,5	30	1,0	30
	1,0	15	1,5	15
Վիրաբուժական, միկրովիրաբուժական, ատամնաբուժական[3] (այդ թվում պտտվող), գինեկոլոգիական, կոսմետոլոգիական գործիքներ, ատամնաբուժական նյութեր[4] Բարդ կառուցվածքային սարքերի և սարքավորումների[5] տարրեր Դեղատնային և լաբորատոր սպասք և լաբորատոր այլ պարագաներ *Մշակման եղանակը՝ ողողում*				
	0,2	60	0,5	60
	0,5	30	1,0	30

1. Հարթ, ոչ ծակոտկեն նյութերից (մետաղ, ապակի, պոլիմերային նյութեր, պլաստիկ) առարկաներ 2. Պարզ կառուցվածքի, խոռոչներով ծակոտկեն մակերեսներ, ինչպես նաև փականային մասեր	1,0	15	2,0	15
1. Ծակոտկեն նյութից (ռետին և այլ պոլիմերային նյութեր) առարկաներ, որոնց որակյալ մաքրումը հնարավոր չէ կամ կասկածելի է: 2. Բարդ կառուցվածքի, խոռոչներով ծակոտկեն մակերեսներ, ինչպես նաև փականային մասեր:	0,5	60	1,0	60
	1,0	30		
	2,0	15	2,0	30

Նշում. 1 – Թույլատրվում է մշակել միայն կոռոզիակայուն մետաղներից արտադրատեսակները (բարձրլեգիրացված, գործիքային լեգիրացված քրոմի բարձր պարունակությամբ), պաշտպանական ծածկույթով տիտանի և նրա համաձուլվածքների, պաշտպանական ծածկույթով ածխածնային պողպատ, պաշտպանական ծածկույթով պղնձի և ալյումինի հիմքով գունավոր մետաղների և համաձուլվածքների, ռետին (բացառությամբ սիլիկոնային), ապակյա և էնդոսկոպների արտադրողի կոցմից թույլատրված մշակում ջրածնի պերօքսիդ պարունակող միջոցներով:
2–Թեստավորված *Mycobacteriumterrae*-ի վրա:
3 –Ռոտացիոն գործիքներ, կոշտհամաձուլվածքային բորեր և ալմաստե հղկող դիսկեր, հայելիներ, արմատի ասեղներ, աքցան, գլադիլկա, էքսկավատոր, ալմաստե դրիլբորերի գլխիկներ, սկալպել, каналонаполнители, скальпели, պինցետ, մկրատ, սեղմակ և ընկղմման եղանակով մշակվող այլ օբյեկտներ:
4 –Ատամնաբուժական արտատպվածքներ ալգինատային, սիլիկոնային նյութերից, պիլիեթերային խեժից, ատամնապրոթեզային կիսահումքեր մետաղից, կերամիկայից, պլաստմասից և այլ նյութերից, արտիկուլյատորներ:
5–Այդ թվում թոքերի արհեստական շնչառության և նարկոզա-շնչառական սարքերի տարրեր (ներառյալ շնչառական ուրվագծերը, պարկերը, շնչադիմակները, խոնավացուցիչները և այլն) նախամանրէազերծման և մանրէազերծման փուլերից առաջ:
6 -Անոթներ, կաթոցիկներ, առարկայական ապակի, ռետինե տանձիկներ, սպասքի լվացման առարկաներ

97. Բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծումն իրականացվում է միջոցի աշխատանքային լուծույթներով դրանց ախտահանումից հետո:

1) Արտադրատեսակներն ամբողջությամբ ընկղմվում են միջոցի լուծույթի մեջ, դրանով լցնելով բոլոր խողովակներն ու խոռոչները, խուսափելով օդային խցանների առաջացումից:

2) Փականային մասեր ունեցող արտադրատեսակներն ընկղմվում են բաց վիճակում, լուծույթի մեջ դրանցով անելով մի քանի աշխատանքային շարժում՝ դեպի արտադրատեսակի դժվարհասանելի մասեր փականի հատվածում լուծույթի լավ թափանցման համար: Լուծույթի շերտի հաստությունը արտադրատեսակների վրա պետք է լինի առնվազն 1 սմ:

3) Պահում են անհրաժեշտ ազդեցության ժամանակը (սխեմա 1):

4) Թրջումից հետո նույն լուծույթի մեջ իրականացնում են արտադրատեսակի մաքրում օգնող հարմարանքներով:

5) Հաջորդաբար պարզաջրում են արտադրատեսակները. սկզբում խմելու ջրով, այնուհետև՝ թորած:

98. Արտադրատեսակների նախամանրէազերծման որակը գնահատվում է ազոպիրամային կամ ամիդոպիրինային փորձ դնելով՝ արյան մնացորդային քանակի առկայության համար, ինչպես նաև ֆենոլֆթալեինային փորձ դնելով՝ լվացող միջոցների հիմնային բաղադրիչների մնացորդային քանակության առկայության համար (միայն այն միջոցների կիրառման դեպքում, որոնց աշխատանքային լուծույթների pH-ը 8,5-ից բարձր է): Վերահսկման ենթակա է միաժամանակ մշակվող նույնանուն արտադրատեսակների 1%-ը (սակայն 3 արտադրատեսակից ոչ պակաս): Արյան մնացորդների հայտնաբերման ժամանակ (դրական փորձ) արտադրատեսակների ամբողջ խումբը, որից վերցվել են արտադրատեսակներ հսկման համար, ենթակա է կրկնակի մշակման մինչև բացասական պատասխան ստանալը:

Սխեմա 1

99. Վիրաբուժական, միկրովիրաբուժական, ատամնաբուժական, գինեկոլոգիական գործիքների, կառուցվածքային-բարդ սարքերի և սարքավորումների և այլ բազմակի օգտագործման բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծում միջոցի լուծույթներով

Ձեռքային և մեքենայացված (ՈՒՁ) եղանակներ

ԱՌԱՋԻՆ
ՓՈՒԼ



Բժշկական արտադրատեսակների թրջում աշխատանքային լուծույթով տարայի մեջ դրանց ամբողջական ընկղմմամբ մշակման ձեռքային եղանակի ժամանակ և դրանով խոռոչները և խողովակները լցնելով

Կամ

Բժշկական արտադրատեսակների մշակում ուլտրաձայնային սարքերում (ՈՒՁՍ)[1] կիրառման ժամանակ մշակման մեքենայացված եղանակ՝ կիրառելով դրանք ամբողջությամբ աշխատանքային լուծույթի մեջ ընկղմելով և լցնելով խոռոչներն ու խողովակները

Աշխատանքային լուծույթի խտություն ըստ միջոցի , %	Ազդեցության ժամանակ, րոպե	Աշխատանքային լուծույթի ջերմաստիճան, ^{0}C
0,20	10	Առնվազն 18
0,5		
1,0		
2,0		

Նշում.1 –Հաճախականությունը ՈՒՁՍ –35-45 կ Հց:



ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Յուրաքանչյուր արտադրատեսակի լվացում նույն լուծույթի մեջ, որի մեջ իրականացվել է թրջումը, օժանդակ պարագաների օգնությամբ, լուծույթի ջերմաստիճանը 18^{0}C-ից ոչ ցածր

Բժշկական արտադրատեսակների կառուցվածքային առանձնահատկություններ	Մշակման ժամանակ, րոպե
Փականային մասեր, խոռոչներ ու խողովակներ չունեցող արտադրատեսակներ	0,5
Փականային մասեր, խոռոչներ ու խողովակներ չունեցող արտադրատեսակներ	1



ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Պարզաջրում հոսող խմելու ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով), առնվազն 3 րոպե



ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Պարզաջրում թորած ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով), առնվազն 30 վայրկյան

100. Ախտահանում համակցված նախամանրէազերծման հետ՝ մեթոդաբանությունը. Բժշկական արտադրատեսակները տեղավորում են միջոցի աշխատանքային լուծույթի մեջ անմիջապես դրանց օգտագործումից հետո: Արտադրատեսակի մակերեսից անհապաղ հեռացնում են տեսանելի աղտոտվածությունները գործվածքային անձեռոցիկով: Օգտագործված անձեռոցիկներն ախտահանում են բժշկական կազմակերպություններում թափոնների ախտահանման ռեժիմներով առանձին տարաների մեջ, այնուհետև օգտահանում են: Առկա խողովակներն ու խոռոչները լցվում են միջոցի լուծույթով՝ խուսափելով օդային խցանների առաջացումից: Միջոցի լուծույթը մղում են խողովակների միջով ներարկիչով կամ այլ հարմարանքներով, օդ փչելով: Գործողությունն իրականացնում են մինչև կենսաածին աղտոտվածության ամբողջական հեռացումը: Քանդվող արտադրատեսակներն ընկղմում են քանդված վիճակում, փականային մասեր ունեցող արտադրատեսակները՝ բացված, նախապես դրանցով լուծույթի մեջ անելով մի քանի աշխատանքային շարժում՝ արտադրատեսակի դժվարհասանելի մասեր փականի հատվածում միջոցի լավ թափանցման համար: Աշխատանքային լուծույթի շերտի հաստությունը արտադրատեսակների վրա պետք է լինի առնվազն 1 սմ: Պահում են ազդեցության անհրաժեշտ ժամանակը սույն հրահանգի սխեմա 2-ին համապատասխան: Ախտահանիչ պահաժամից հետո արտադրատեսակները հանվում են տարայից և հաջորդաբար լվացվում միջոցի մնացորդներից. սկզբում խմելու ջրով, այնուհետև՝ թորած: Հատուկ ուշադրություն են դարձնում խողովակների լվացմանը (ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով) և թույլ չեն տալիս, որպեսզի բացթողնված ջուրը լցվի լվացվող արտադրատեսակներով տարայի մեջ:

Սխեմա 2

Վիրաբուժական, միկրովիրաբուժական, ատամնաբուժական, գինեկոլոգիական գործիքների, կառուցվածքային-բարդ սարքերի և այլ բազմակի օգտագործման բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծման հետ համակցված ախտահանում միջոցի լուծույթներով

Ձեռքային և մեքենայացված[1] (ՈՒՁ) եղանակներ



ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ

Բժշկական արտադրատեսակների թրջում[2] դրանք ամբողջությամբ ընկղմելով աշխատանքային լուծույթի մեջ և դրանով լցնելով խոռոչներն ու խողովակները

Պարզ կառուցվածքի, ոչ ծակոտկեն նյութից հարթ առարկաներ			Բարդ կառուցվածքի, խոռոչներով ծակոտկեն նյութից առարկաներ, փականային մասեր:		
Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	Վարակի էթիոլոգիան		Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	Վարակի էթիոլոգիան	
	Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի), վիրուսային, սնկային (կանդիդոզներ)	Սնկային (դերմատոֆիտիաներ), Տուբերկուլոզ[2]		Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի), վիրուսային, սնկային (կանդիդոզներ)	Սնկային (դերմատոֆիտիաներ), Տուբերկուլոզ[2]
	Ազդեցության ժամանակ, րոպե			Ազդեցության ժամանակ, րոպե	
0,2	60	-	0,5	60	-
0,5	30	60	1,0	30	60
1,0	15	30	2,0	15	30
2,0	-	15	-	-	-

Նշում.1 –Հաճախականության բնութագիր УЗУ–35-45 կՀց
2–թրջման փուլում աշխատանքային լուծույթի մեջ ապահովվում է բժշկական արտադրատեսակների ախտահանում վիրուսային, մանրէային (ներառյալ տուբերկուլոզը) և սնկային վարակների ժամանակ:
3 –Թեստավորված է *Mycobacteriumterrae*-ի վրա:



ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Յուրաքանչյուր արտադրատեսակի լվացում նույն լուծույթի մեջ, որում իրականացվել է թրջումը, օժանդակ պարագաների օգնությամբ (խոզանակ, բամբակ-թանզիվե խծուծ կամ գործվածքային անձեռոցիկ), լուծույթի առնվազն 18^{0}C ջերմաստիճանում

Բժշկական արտադրատեսակների կառուցվածքային առանձնահատկություններ	Մշակման ժամանակ, րոպե
Փականային մասեր, խոռոչներ ու խողովակներ չունեցող արտադրատեսակներ	0,5
Փականային մասեր, խոռոչներ ու խողովակներ ունեցող արտադրատեսակներ	1



ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Պարզաջրում հոսող խմելու ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով), առնվազն 3 րոպե



ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Պարզաջրում թորած ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով), առնվազն 30 վայրկյան

ԷՆԴՈՍԿՈՊԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ

(ճկուն և կոշտ էնդոսկոպներ, դրանց կից գործիքներ և պարագաներ).

101. Թույլատրվում է օգտագործել միջոցի լուծույթները միայն այն էնդոսկոպների մշակման համար, որոնց արտադրողը թույլատրում է այդ նպատակների համար ջրածնի և հարքացախաթթվի հիմքով ախտահանիչների կիրառումը:

Աղյուսակ 19

Ճկուն և կոշտ էնդոսկոպների, դրանց կից գործիքների և պարագաների մշակում

Էնդոսկոպներ և դրանց պարագաներ ոչ մանրէազերծ միջամտությունների համար	Էնդոսկոպներ և դրանց պարագաներ մանրէազերծ միջամտությունների համար	Գործիքներ ճկուն և կոշտ էնդոսկոպների համար
Նախնական մաքրում[1]	Նախնական մաքրում[1]	Նախնական մաքրում[1]
Եզրափակիչ/եզրափակիչ մաքրում՝ ախտահանման հետ համակցված[2]	Նախամանրէազերծում՝ ախտահանման հետ համակցված[2]	Նախամանրէազերծում՝ ախտահանման հետ համակցված[2]
ԲՄԱ	Մանրէազերծում	Մանրէազերծում

Նշում: 1 – նախնական մաքրման համար կիրառվող միջոցի աշխատանքային լուծույթները օգտագործվում են մեկ անգամ
2 – նախամանրէազերծման/եզրափակիչ մաքրման համար, այդ թվում ախտահանման հետ համակցված, կիրառվող միջոցի աշխատանքային լուծույթները օգտագործվում են բազմակի, աշխատանքային հերթափոխի ընթացքում:

102. Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախնական մաքրում. Մշակման մեթոդաբանություն՝ էնդոսկոպների և դրանց կից գործիքների մշակումը իրականացվում է առանձին: Սարքավորման մշակումն սկսում են անմիջապես էնդոսկոպիական միջամտություն իրականացնելուց հետո, աշխատելով թույլ չտալ կենսաբանական աղտոտվածությունների չորացում: Տեսանելի աղտոտվածությունները էնդոսկոպի արտաքին մակերեսից, այդ թվում օբյեկտիվից, հեռացնում են միջոցի լուծույթով թրջված գործվածքային (թանզիվե) անձեռոցիկով: Էնդոսկոպի աշխատանքային մասը շփում են կառավարման բլոկից դեպի դիստալ հատված ուղղությամբ: Էնդոսկոպի խողովակները լվանում են միջոցի աշխատանքային լուծույթով, ընկղմելով լուծույթով տարայի մեջ ճկուն էնդոսկոպի դիստալ հատվածը: Արտադրատեսակը լվանում են խմելու ջրով: Նախնական մաքրումից հետո էնդոսկոպն անջատում են սնուցման աղբյուրից և էնդոսկոպիական արտածծիչից, տեղափոխում են մշակման սենք, պահպանելով հակահամաճարակաբանական միջոցառումները (փակ վիճակով տեփուրի վրա կամ կոնտեյների մեջ): Էնդոսկոպին կից գործիքներն

ամբողջությամբ ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ: Արտադրատեսակները մաքրում են միջոցի լուծույթի մեջ գործվածքային (թանզիվե) անձեռոցիկներով, թույլ չտալով ցայտերի առաջացում: Արտադրատեսակների խողովակները լվանում են ներարկիչով կամ այլ հատուկ հարմարանքներով: Մաքրումից հետո էնդոսկոպների կից գործիքները լվանում են խմելու ջրով: Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախնական մաքրման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի սխեմաներ 3,4-ում:

103. Ոչ մանրէազերծ միջամտությունների էնդոսկոպների վերջնական մաքրում ԲՄԱ-ից առաջ: Մշակման մեթոդաբանություն՝ էնդոսկոպների և դրանց կից գործիքների մշակումն իրականացվում է առանձին: Էնդոսկոպը և դրան կից պարագաներն ամբողջությամբ ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ, ապահովելով ամբողջական շփում արտադրատեսակների մակերեսների հետ, և հարկադրաբար լցնում են բոլոր խողովակները օգնող հարմարանքների միջոցով: Խողովակներից օդի հեռացման համար օգտագործում են ներարկիչ (պոմպ): Պահում են ազդեցության անհրաժեշտ ժամանակը և սկսում դրանց մաքրումը: Էնդոսկոպի և դրան կից պարագաների արտաքին մակերեսը մաքրում են լուծույթի մակերեսի վրա գործվածքային (թանզիվե) անձեռոցիկներով, թույլ չտալով ցայտում: Էնդոսկոպի գործիքների և պարագաների մաքրումն իրականացնում են՝ օգտագործելով հատուկ խոզանակներ: Իրականացնում են խողովակների մեխանիկական մաքրում (էնդոսկոպի արտադրողի առաջարկներին համապատասխան), օգտագործելով հատուկ խոզանակներ, մետաղալարե մաքրիչներ, որոնք համապատասխանում են խողովակների տրամագծին ու երկարությանը: Միջոցի աշխատանքային լուծույթներով էնդոսկոպի խողովակների լվացման համար օգտագործում են ներարկիչներ կամ այլ հարմարանքներ այդ նպատակների համար, որոնք էնդոսկոպի հետ լինում են նույն լրակազմում: Մեխանիկական մաքրումից հետո էնդոսկոպը և դրան կից պարագաները տեղափոխում են խմելու ջրով տարաների մեջ և լվանում միջոցի մնացորդներից: Էնդոսկոպի, դրա պարագաների լվացումը իրականացնում են հաջորդաբար սկզբում խմելու ջրով, այնուհետև՝ թորած: Ոչ մանրէազերծ միջամտությունների էնդոսկոպների և դրանց կից պարագաների վերջնական մաքրման ռեժիմները, չհամակցված ախտահանման հետ, ներկայացված են սույն հրահանգի սխեմաներ 3, 4-ում:

104. Բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծման (եզրափակիչ) մաքրման որակի հսկողությունը: Արտադրատեսակների նախամանրէազերծման որակը գնահատում են ազոպիրամային կամ ամիդոպիրինային փորձերի միջոցով՝ արյան մնացորդային քանակությունների համար, ինչպես նաև ֆենոլֆտալեինային փորձ դնելու միջոցով՝ լվացող միջոցների հիմնային բաղադրիչների մնացորդային քանակությունների առկայության համար (միայն այն միջոցների կիրառման դեպքում, որոնց աշխատանքային լուծույթների pH-ը բարձր է 8,5-ից): Հսկման ենթակա է միաժամանակ մշակված նույնանուն արտադրատեսակների 1%-ը (սակայն 3 արտադրատեսակից ոչ պակաս): Արյան մնացորդների հայտնաբերման ժամանակ (դրական փորձ) արտադրատեսակների ամբողջ խումբը, որից վերցրել են արտադրատեսակներ հսկման համար, ենթակա է կրկնակի մշակման, մինչև բացասական արդյունքի ստացումը:

Սխեմա 3

Ճկուն և կոշտ էնդոսկոպների, դրանց կից գործիքների և պարագաների նախնական մաքրում

Ոչ մանրէազերծ միջամտությունների Էնդոսկոպների և դրանց կից պարագաների եզրափակիչ մաքրում (նախամանրէազերծում) միջոցի աշխատանքային լուծույթներով

Ձեռքային եղանակ

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ



Արտադրատեսակների մշակում աշխատանքային լուծույթի մեջ ամբողջությամբ ընկղմելով և լուծույթով խոռոչներն ու խողովակները լցնելով

Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	Ազդեցության ժամանակ, րոպե	Աշխատանքային լուծույթի ջերմաստիճան, ^{0}C
0,20	10	Առնվազն 18
0,5		
1,0		
2,0		

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Յուրաքանչյուր արտադրատեսակի լվացում նույն լուծույթի մեջ, որում իրականացվել է թրջումը, լուծույթի առնվազն 18^{0}C ջերմաստիճանում

Ճկուն էնդոսկոպի բաժիններ	Մշակման ժամանակ, րոպե	Կոշտ էնդոսկոպի բաժիններ	Մշակման ժամանակ, րոպե
Գործիքային խողովակը մաքրում են գործիքային խողովակի մաքրման խոզանակով	1	Յուրաքանչյուր դետալ լվանում են խոզանակով կամ գործվածքային (թանզիվե) անձեռոցիկով	0,5
Ներքին խողովակները լվանում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով	1	Խողովակները լվանում են ներարկիչով	1
Արտաքին մակերեսը լվանում են գործվածքային (թանզիվե) անձեռոցիկով	0,5		
Էնդոսկոպներին կից գործիքների մակերեսներ			
Արտաքին մակերեսը լվանում են խոզանակով կամ գործվածքային (թանզիվե) անձեռոցիկով		Մշակման ժամանակը՝ 0,5 րոպե	
Մեխանիկորեն մաքրում են ներքին խողովակները խոզանակներով և մետաղալարային մաքրիչներով		Մշակման ժամանակը՝ 1 րոպե	
Կրկնակի լվանում են ներքին խողովակները միջոցի լուծույթով հատուկ հարմարանքներով			

ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Պարզաջրում հոսող խմելու ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով)

Գործիքները՝ առնվազն 3 րոպե

Էնդոսկոպները՝ առնվազն 5 րոպե



ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Պարզաջրում թորած ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով) առնվազն մեկ րոպե

նշում.1 –Չորրորդ փուլը կիրառվում է նախամանրէազերծման (եզրափակիչ մաքրման) ռեժիմի ժամանակ

Սխեմա 4

Ճկուն և կոշտ էնդոսկոպների, դրանց կից գործիքների և պարագաների նախնական մաքրում

Ոչ մանրէազերծ միջամտությունների էնդոսկոպների և դրանց կից պարագաների եզրափակիչ մաքրում (նախամանրէազերծում) միջոցի աշխատանքային լուծույթներով

Մեքենայացված (ՈՒՁ)[1] եղանակ

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ



Արտադրատեսակների թրջում աշխատանքային լուծույթի մեջ դրանց ամբողջական ընղմմամբ և խոռոչներն ու խողովակները լցնելով լուծույթով

Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, %	Ազդեցության ժամանակ, րոպե	Աշխատանքային լուծույթի ջերմաստիճան, ^{0}C
0,20	10	Առնվազն 18
0,5		
1,0		
2,0		

Նշում. 1 –Հաճախության բնութագրեր ՈՒՁ էնդովիրաբուժական գործիքների համար՝ 35-38 կՀց



ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Պարզաջրում հոսող խմելու ջրով սարքավորման աշխատանքի ռեժիմին համապատասխան կամ սարքավորումից դուրս (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով), առնվազն 3 րոպե



ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Պարզաջրում հոսող խմելու ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով)

Գործիքները՝ 3 րոպե

Էնդոսկոպները՝ 5 րոպե



ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ[2]

Պարզաջրում թորած ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով) առնվազն մեկ րոպե

Նշում.2 – Չորրորդ փուլը կիրառվում է նախամանրէազերծման (եզրափակիչ մաքրման) ռեժիմի ժամանակ

105. Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների ախտահանում, համակցված նախամանրէազերծման/ եզրափակիչ մաքրման հետ: Մշակման մեթոդաբանություն՝ էնդոսկոպների և դրանց կից գործիքների մշակումն իրականացվում է առանձին: Էնդոսկոպը և դրա կից գործիքները ամբողջությամբ ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ, ապահովելով ամբողջական շփում արտադրատեսակների մակերեսների հետ, և հարկադրաբար լցնում են ներքին խողովակները: Խողովակներից օդի հեռացման համար օգտագործում են ներարկիչ (պոմպ): Պահում են ազդեցության անհրաժեշտ ժամանակը և սկսում մաքրումը: Էնդոսկոպի և նրա գործիքների արտաքին մակերեսները մաքրում են լուծույթի մակերեսի վրա գործվածքային (թանզիվե) անձեռոցիկներով, թույլ չտալով ցայտում: Գործիքների և էնդոսկոպի պարագաների մաքրումը նույնպես իրականացնում են խոզանակներով: Էնդոսկոպների և նրանց կից գործիքների ներքին խողովակների և հանվող մասերի մեխանիկական մաքրումը իրականացնում են խոզանակներով և

համապատասխան չափի մետաղալարե մաքրիչներով: Իրականացնում են էնդոսկոպների և գործիքների ներքին խողովակների կրկնակի լվացում լվացող ախտահանող միջոցի լուծույթով հատուկ հարմարանքներով (սրսկող փողեր, լվացող ներարկիչներ, պոմպ կամ լվացող ատրճանակ համապատասխան գլխադիրներով): Մեխանիկական մաքրումից հետո էնդոսկոպը և նրա կից գործիքները տեղափոխում են խմելու ջրով տարաների մեջ և լվանում միջոցի մնացորդներից: Էնդոսկոպի և նրա գործիքների պարզաջրումը այդ թվում խողովակները մղման հատուկ հարմարանքներով, իրականացնում են հաջորդաբար՝ սկզբում հոսող խմելու ջրով, այնուհետև՝ թորած: Լվացումից հետո էնդոսկոպի և նրա գործիքների արտաքին մակերեսները չորացնում են փափուկ գործվածքով, խողովակների մեջ օդ են փչում օդային ատրճանակներով: Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախամանրէազերծման/եզրափակիչ մաքրման հետ համակցված ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի սխեմաներ 5, 6-ում:

Սխեմա 5

Ճկուն և կոշտ էնդոսկոպների, դրանց կից պարագաների և գործիքների ախտահանում՝ նախամանրէազերծման/եզրափակիչ մաքրման հետ համակցված, միջոցի լուծույթներով

Ջեռքային եղանակ



ԱՌԱՋԻՆ ՓՈԻԼ

Էնդոսկոպների (կամ ամբողջությամբ չընկղմվող էնդոսկոպների համար դրանց ընկղմման թույլատրվող մասերի), գործիքների և դրանց կից պարագաների թրջում[1] միջոցի աշխատանքային լուծույթի մեջ դրանք ամբողջությամբ ընկղմելով և խոռոչներն ու խողովակները լուծույթով լցնելով

Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, (%)	Վարակ		Աշխատանքային լուծույթի ջերմաստիճան, ^{0}C
	Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի),	Սնկային (դերմատոֆիտիաներ), Տուբերկուլոզ[3]	

	վիրուսային, սնկային (կանդիդոզներ)		
	Ազդեցության ժամանակ, րոպե		
0,5	60	-	Առնվազն 18
1,0	30	60	
2,0	15	30	

Նշում.1–թրջման փուլում աշխատանքային լուծույթի մեջ ապահովվում է էնդոսկոպների ախտահանում վիրուսային, մանրէային (ներառյալ տուբերկուլոզը) և սնկային վարակների ժամանակ
2–Թեստավորված Mycobacteriumterrae-ի վրա

ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Յուրաքանչյուր արտադրատեսակի լվացում նույն լուծույթի մեջ, որտեղ իրականացվել է թրջումը, լուծույթի առնվազն 18°C ջերմաստիճանում

Ճկուն էնդոսկոպի բաժիններ	Մշակման ժամանակ, րոպե	Կոշտ էնդոսկոպի բաժիններ	Մշակման ժամանակ, րոպե
Գործիքային խողովակը մաքրում են գործիքային խողովակի մաքրման խոզանակով	1	Յուրաքանչյուր դետալ լվանում են խոզանակով կամ գործվածքային (թանզիվե) անձեռոցիկով	0,5
Ներքին խողովակները լվանում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով	1	Խողովակները լվանում են ներարկիչով	1
Արտաքին մակերեսը լվանում են գործվածքային (թանզիվե) անձեռոցիկով	0,5		
Էնդոսկոպներին կից գործիքների մակերեսներ			
Արտաքին մակերեսը լվանում են խոզանակով կամ գործվածքային (թանզիվե) անձեռոցիկով		Մշակման ժամանակը՝ 0,5 րոպե	
Մեխանիկորեն մաքրում են ներքին խողովակները խոզանակներով և մետաղալարային մաքրիչներով		Մշակման ժամանակը՝ 1 րոպե	
Կրկնակի լվանում են ներքին խողովակները միջոցի լուծույթով հատուկ հարմարանքներով			



ԵՐՐՈՐԴ ՓՈԽԼ

Պարզաջրում հոսող խմելու ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով)

Գործիքները՝ 3 րոպե

Էնդոսկոպները՝ 5 րոպե



ՉՈՐՐՈՐԴ ՓՈԽԼ[2]

Պարզաջրում թորած ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով) առնվազն մեկ րոպե

Սխեմա 6

Ճկուն և կոշտ էնդոսկոպների, դրանց կից գործիքների ու պարագաների ախտահանում՝ համակցված նախամանրէազերծման/եզրափակիչ մաքրման հետ, միջոցի լուծույթներով

Մեքենայացված (ՈՒՁ)[1] եղանակ



ԱՌԱՋԻՆ ՓՈԽԼ

Էնդոսկոպների (կամ ամբողջությամբ չընկղմվող էնդոսկոպների համար դրանց ընկղմման թույլատրվող մասերի), գործիքների և դրանց կից պարագաների թրջում[2] միջոցի աշխատանքային լուծույթի մեջ դրանք ամբողջությամբ ընկղմելով և խոռոչներն ու խողովակները լուծույթով լցնելով

Աշխատանքային լուծույթի խտությունն ըստ միջոցի, (%)	Վարակ		Աշխատանքային լուծույթի ջերմաստիճան, ^{0}C
	Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի), վիրուսային, սնկային (կանդիդոզներ)	Սնկային (դերմատոֆիտիաներ), Տուբերկուլոզ[3]	

	Ազդեցության ժամանակ, րոպե		
0,5	60	-	Առնվազն 18
1,0	30	60	
2,0	15	30	

Նշում.1 –հաճախականության բնութագրեր ՈւՁ –35-38 կՀց
2– թրջման փուլում աշխատանքային լուծույթի մեջ ապահովվում է էնդոսկոպների ախտահանում վիրուսային, մանրէային (ներառյալ տուբերկուլոզը) և սնկային վարակների ժամանակ
3–Թեստավորված է Mycobacteriumterrae-ի վրա



ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Պարզաջրում հոսող խմելու ջրով սարքի աշխատանքի ռեժիմին համապատասխան կամ սարքից դուրս (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով)

Գործիքները՝ 3 րոպե

Էնդոսկոպները՝ 5 րոպե



ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Պարզաջրում թորած ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով) առնվազն մեկ րոպե

10. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

106. Միջոցով աշխատել չի թույլատրվում 18 տարեկանից ցածր, ալերգիկ հիվանդություններ ունեցող անձանց, հղի կանանց և կերակրող մայրերին:

107. Միջոցով աշխատում են՝ օգտագործելով հետևյալ անհատական պաշտպանության միջոցները (ԱՊՄ).

1) Մաշկի պաշտպանության միջոցներ՝

ա. պաշտպանիչ խալաթ կամ համազգեստ, քիմիապես կայուն ձեռնոցներ կաուչուկից, լատեքսից, պոլիվինիլքլորիդից և այլն, որոնք ապահովում են պաշտպանություն լվացող նյութերից, ինչպես նաև ախտածին մանրէներից,

բ. ոտքերի պաշտպանության միջոցներ (մեկանգամյա կիրառության միջոցներ կամ ռետինե ճտքակոշիկներ):

2) Աչքերի պաշտպանության միջոցներ՝

ա. ակնոց կամ դիմակ, որոնք ապահովում են պաշտպանություն քիմիական ախտահանիչների ցայտումից, ինչպես նաև ախտածին մանրէներ պարունակող հեղուկների ցայտումից,

բ. վահանակներ, էկրաններ:

3) Շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ՝

ա. քիմիական ախտահանիչների գոլորշիներից, ինչպես նաև ախտածին մանրէներից (օդակաթիլային ճանապարհով փոխանցվող օրգանիզմների առաջացման հնարավորության դեպքում) պաշտպանություն ապահովող դիմակներ,

բ. «В» մակնիշի պատրոնով РПГ-67 կամ РУ-60М տեսակի ունիվերսալ շնչադիմակներ:

108. Միջոցով աշխատելիս խուսափում են փոշու առաջացումից և մաշկի վրա ու աչքերի մեջ միջոցի աշխատանքային լուծույթների և փոշու լցվելուց: Միջոցի աշխատանքային լուծույթների պատրաստումն իրականացվում է ԱՊՄ-ի (պաշտպանիչ ակնոց և ռետինե ձեռնոց) օգտագործմամբ:

109. Շփման, ընկղմման և թրջման եղանակով օբյեկտների ախտահանումն իրականացվում է մարդկանց ներկայությամբ, առանց շնչառական օրգանների պաշտպանության միջոցների: Ախտահանում իրականացնող անձնակազմի համար պարտադիր է մաշկի անհատական պաշտպանության միջոցների (պաշտպանիչ խալաթ, ձեռնոց) օգտագործումը:

110. Ոռոգման եղանակով մշակման ժամանակ անձնակազմն օգտագործում է շնչառական օրգանների («В» մակնիշի պատրոնով РПГ-67 կամ РУ-60М տեսակի ունիվերսալ շնչադիմակներ), աչքերի (հերմետիկ ակնոց), ձեռքերի (ռետինե ձեռնոց) անհատական պաշտպանության միջոցներ: Մշակումն իրականացվում է պացիենտների բացակայությամբ: Ախտահանումից հետո իրականացվում է խոնավ մաքրում և սենքի օդափոխություն:

111. Միջոցի լուծույթներով տարաները ընկղմման (թրջման) եղանակով օբյեկտների մշակման ժամանակ փակվում են:

112. Միջոցով աշխատանքներ իրականացնելիս խստորեն պահպանում են անձնական հիգիենայի կանոնները: Աշխատանքից հետո դեմքն ու ձեռքերը լվանում են օճառով:

11. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

113. Ոռոգման եղանակով աշխատանքի ժամանակ նախազգուշական միջոցառումները չպահպանելու դեպքում հնարավոր է առաջանան վերին շնչառական օրգանների և աչքերի գրգռում:

114. Շնչառական օրգանների գրգռման ժամանակ դադարեցնում են աշխատանքը միջոցով, տուժածին հանում մաքուր օդի կամ լավ օդափոխվող սենք: Բերանը և քիթըմպանը ողողում են ջրով, անհրաժեշտության դեպքում դիմում բժշկի:

115. Միջոցի աշխատանքային լուծույթի (փոշու) մաշկի վրա պատահական լցվելու դեպքում անհապաղ լվանում են մեծ քանակությամբ ջրով, այնուհետև քսում փափկացնող քսուկ:

116. Միջոցի աշխատանքային լուծույթի (փոշու) աչքերի մեջ լցվելիս աչքերն անմիջապես լվանում են ջրի շիթով 10 րոպե և անմիջապես դիմում ակնաբույժի:

117. Միջոցը ստամոքսի մեջ հայտնվելու ժամանակ խմում են ակտիվացված ածուխի 10-20 մանրացված հաբով մի քանի բաժակ ջուր և դիմում բժշկի: Փսխում առաջացնել և ստամոքսի լվացում անել խորհուրդ չի տրվում:

12. ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ, ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, ՊԱՀՈՒՄ

118. Միջոցը տեղափոխվում է վերգետնյա տրանսպորտի բոլոր տեսակներով, արտադրողի փաթեթավորմամբ՝ տրանսպորտի տվյալ տեսակի համար գործող, միջոցի ու տարայի անվնասությունը երաշխավորող բեռների տեղափոխման կանոններին համապատասխան: Թույլատրվում է տեղափոխումը բացասական ջերմաստիճանի ժամանակ:

119. Միջոցը պահում են արտադրողի չբացված փաթեթավորմամբ 0^0C-ից մինչև +30^0C ջերմաստիճանում, արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, ջերմության աղբյուրներից, դյուրավառ հեղուկներից, լուծիչներից, թթուներից, վերականգնիչներից հեռու տեղում: Աղտոտող նյութերի լցվելն արտադրանքի մեջ բացառում են, պահում են դեղամիջոցներից, սննդամթերքից առանձին, երեխաների համար անհասանելի տեղում: Չեն ծխում, միջոցի մոտակայքում չեն իրականացնում վտանգավոր աշխատանքներ, որոնք կարող են լինել կրակի և կայծի աղբյուր:

120. Թափված միջոցի հավաքումն իրականացվում է՝ օգտագործելով հատուկ արտահագուստ և ձեռքերի մաշկի (ռետինե ձեռնոց), աչքերի (պաշտպանիչ ակնոց) պաշտպանության միջոցներ, մեծ քանակությամբ թափված միջոցի հավաքման ժամանակ՝ շնչառական օրգանների ԱՊՄ (հակափոշային շնչադիմակ կամ «Լեպեստոկ» տեսակի շնչադիմակ): Թափված միջոցը հավաքվում է օգտահանման բեռնարկղի մեջ, միջոցի մնացորդները մակերեսից լվացվում են մեծ քանակությամբ ջրով:

121. Շրջակա միջավայրի պաշտպանության միջոցառումներ՝ միջոցի բաղադրիչները և ակտիվացված լուծույթն առանց նոսրացնելու չեն լցնում մակերեսային կամ ստորգետնյա կեղտաջրերի և կոյուղու մեջ: Կոյուղու մեջ միջոցը լցվում է միայն նոսրացված վիճակում:

13. ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

122. Ըստ որակի ցուցանիշների, միջոցը հսկվում է սույն հրահանգի աղյուսակ 20-ում ներկայացված ցուցանիշներին և նորմաներին համապատասխան:

Աղյուսակ 20.

Միջոցի որակի ցուցանիշներ

	Ցուցանիշի անվանում	Նորմա
1	Արտաքին տեսք, գույն, հոտ	Սպիտակից մինչև բաց-դեղին գույնի թույլ, յուրահատուկ հոտով կամ առանց հոտի փոշի
2	Միջոցի ջրային լուծույթի ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշը (pH) 2%, 20^{0}C ջերմաստիճանում	10±1,0
3	Ակտիվ թթվածնի զանվածային բաժին, %	առնվազն 5,0

123. Արտաքին տեսքը և գույնը որոշվում է ակնադիտորեն, հոտը որոշում են օրգանոլեպտիկ եղանակով:

124. Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշի, միջոցի pH-ի որոշում՝ ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշը որոշում են պոտենցիոմետրիկ մեթոդով՝ ցանկացած տեսակի pH-մետրով՝ սարքի հրահանգին համապատասխան: Որոշման ջերմաստիճանը՝ 20^{0}C:

125. Ակտիվ թթվածնի զանգվածային բաժնի որոշում, %: Սարքավորումներ, նյութեր, ռեակտիվներ.

1) Կշեռք լաբորատոր ընդհանուր նշանակության ճշգրտության 2 դաս, ըստ ԳՕՍՏ Р 53228 200 գ կշռման առավելագույն սահմանով,

2) բյուրետ 1-1-2-25-0,1 ըստ ԳՕՍՏ 29251,

3) չափիչ կոլբա 1-500-2 ըստ ԳՕՍՏ 1770,

4) կոլբա Кн-1-500-29/32 ըստ ԳՕՍՏ 25336 հղկված խցանով,

5) կոլբա Кн-1-250-29/32 ըստ ԳՕՍՏ 25336 հղկված խցանով,

6) գլան 1-100-1 ըստ ԳՕՍՏ 1770,

7) ծծմբական թթու ԳՕՍՏ 4204, ջրային լուծույթ 10% զանգվածային բաժնով,

8) կալիումի յոդիդ ԳՕՍՏ 4232, 10% լուծույթ,

9) նատրիումի թիոսուլֆատ 5 ջրային, ջրային լուծույթ С ($Na_2S_2O_3 \bullet 5H_2O$)=0,1 մոլ/դմ^3 խտությամբ, պատրաստում են ֆիքսանալից ըստ ТУ 6-09-2540,

10) լուծվող օսլա ԳՕՍՏ 10163, ջրային լուծույթ 0,5% զանգվածային բաժնով, պատրաստում են ըստ ԳՕՍՏ 4517,

11) թորած ջուր ըստ ԳՕՍՏ 6709:

126. Հետազոտության իրականացում. Միջոցի 5 գ քանակությամբ կշռուկը, կշռված մինչև չորրորդ տասնորդական նիշի ճշտությամբ, տեղավորում են 500 մլ տարողությամբ հղկված խցանով կոնաձև կոլբայի մեջ, ավելացնում 250 մլ ջուր, տաքացված մինչև 35-40^{0}C ջերմաստիճան, և եռանդուն կերպով, մագնիսական խառնիչի օգնությամբ խառնելով լուծույթը, ամբողջությամբ լուծում են կշռուկը (10-15 րոպե): Ստացված լուծույթը քանակապես, ջրով տեղափոխում են 500 սմ^3 տարողությամբ չափիչ կոլբայի մեջ և մինչև սենյակային ջերմաստիճան սառչելուց հետո լուծույթի ծավալը ջրով հասցնում են մինչև նիշը, խառնում են: 250 սմ^3 տարողությամբ կոնաձև կոլբայի մեջ լցնում են նմուշի 20 սմ^3 ստացված լուծույթ, ավելացնում 90 սմ^3 ծծմբական թթվի լուծույթ և 10 սմ^3 կալիումի յոդիդի լուծույթ, կոլբան փակում են խցանով, խառնում և պահում մութ տեղում 10 րոպե: Նշված ժամանակը լրանալուց հետո լուծույթը տիտրում են նատրիումի թիոսուլֆատով: Տիտրման գործընթացում բաց դեղին գունավորման հասնելուց լուծույթին ավելացնում են 2-3 սմ^3 օսլայի լուծույթ և շարունակում տիտրումը մինչև լուծույթի ամբողջապես գունաթափվելը:

127. Արդյունքների մշակում. Միջոցի մեջ թթվածնի զանգվածային բաժինը (X, %) որոշում են հետևյալ բանաձևով.

$$X=\frac{0.0008\times V\times K\times 500\times 100}{m\times 20}=\frac{2\times V\times K}{m}$$

որտեղ՝ 0,0008 – ակտիվ թթվածնի զանգվածն է, որը համապատասխանում է նատրիումի թիոսուլֆատի 1 սմ^3 լուծույթին ճիշտ C(Na2S2O3•5H2O)= 0,1 մոլ/դմ^3 (0,1ն) խտության, գ,

V – նատրիումի թիոսուլֆատի ծավալն է, որը ծախսվել է տիտրման վրա, մլ,

K – շտկման գործակից նատրիումի թիոսուլֆատի 0,1 մոլ/դմ^3 խտությանը,

m – միջոցի կշռուկի զանգվածն է, գ:

128. Արդյունքը հաշվում են բանաձևով, ստորակետից հետո մինչև մեկ նիշ կլորացման աստիճանով: Որպես հետազոտության արդյունք ընդունում են երկու զուգահեռ որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունը չի գերազանցում թույլատրելի տարբերությանը՝ հավասար 0,1-ի: Որոշման արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային սխալը ±5% է P =0,95 հավանականության վստահելիության միջակայքում: